ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ИСТОРИЧЕСКИЙ ФАКУЛЬТЕТ

YEREVAN STATE UNIVERSITY
FACULTY OF HISTORY

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ИСТОРИЯ И КУЛЬТУРА

АРМЕНОВЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ

HISTORY AND CULTURE

JOURNAL OF ARMENIAN STUDIES

№ 2

ԵՐԵՎԱՆ - ЕРЕВАН - YEREVAN
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ, YSU PRESS
2021

Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ

Գլխավոր խմբագիր՝ պ.գ.դ., պրոֆ. **Էդիկ Մինասյան**

Խմբագրական խորհուրդ՝

Աշոտ Մելքոնյան (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պ.գ.դ., պրոֆ.), **Արամ Սիմոնյան** (ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պ.գ.դ., պրոֆ.), **Ալբերտ Ստեփանյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայկ Ավետիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Լևոն Չուգասզյան** (արվ.գ.դ., պրոֆ.), **Համլետ Պետրոսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Արման Եղիազարյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայկազ Հովհաննիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Ներսիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Հայրունի** (պ.գ.դ., պրոֆ.), **Վալերի Թունյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Վանիկ Վիրաբյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Ռաֆիկ Նահապետյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հակոբ Հարությունյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հովիկ Գրիգորյան** (պ.գ.թ., դոց.), **Մխիթար Գաբրիելյան** (պ.գ.թ., դոց.), **Էդգար Հովհաննիսյան** (պ.գ.թ., դոց.):

Главный редактор - докт. ист. наук, проф. **Эдик Минасян**

Редакционная коллегия:

Ашот Мелконян (академик НАН РА, д.и.н., проф.), **Арам Симонян** (чл.-кор. НАН РА, д.и.н., проф.), **Альберт Степанян** (д.и.н., проф.), **Айк Аветисян** (д.и.н., проф.), **Левон Чугасзян** (д. иск. н., проф.), **Гамлет Петросян** (д.и.н., проф.), **Арман Егиазарян** (д.и.н., проф.), **Айказ Оганесян** (д.и.н., проф.), **Ашот Нерсесян** (д.и.н., проф.), **Ашот Айруни** (д.и.н., проф.), **Валерий Тунян** (д.и.н., проф.), **Ваник Вирабян** (д.и.н., проф.), **Рафик Наапетян** (д.и.н., проф.), **Акоб Арутюнян** (д.и.н., проф.), **Овик Григорян** (к.и.н., доц.), **Мхитар Габриелян** (к.и.н., доц.), **Эдгар Оганнисян** (к.и.н., доц.).

Editor-in-Chief: Doctor of Sciences, Prof. **Edik Minasyan**

Editorial Board:

Ashot Melkonyan (Academician of NAS RA, Doctor of Sciences, Prof.), **Aram Simonyan** (Corresp. Member of NAS RA, Doctor of Sciences, Prof.), **Albert Stepanyan** (Doctor of Sciences, Prof.), **Hayk Avetisyan** (Doctor of Sciences, Prof.), **Levon Chugaszyan** (Doctor of Arts, Prof.), **Hamlet Petrosyan** (Doctor of Sciences, Prof.), **Arman Yeghiazaryan** (Doctor of Sciences, Prof.), **Haikaz Hovhannisyan** (Doctor of Sciences, Prof.), **Ashot Nersisyan** (Doctor of Sciences, Prof.), **Asot Hayruni** (Doctor of Sciences, Prof.), **Valeri Tunyan** (Doctor of Sciences, Prof.), **Vanik Virabyan** (Doctor of Sciences, Prof.), **Rafik Nahapetyan** (Doctor of Sciences, Prof.), **Hakob Harutunyan** (Doctor of Sciences, Prof.), **Hovik Grigoryan** (PhD in History, Associate Prof.), **Mkhitar Gabrielyan** (PhD in History, Associate Prof.), **Edgar Hovhannisyan** (PhD in History, Associate Prof.).

ISSN 1829-2771

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ
СОДЕРЖАНИЕ / CONTENT

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ / ИСТОРИЯ / HISTORY

Էդիկ Մինասյան - ՀԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ 6

Эдик Минасян - АРМЯНО-ТУРЕЦКИЕ ОТНОШЕНИЯ В ГОДЫ НЕЗАВИСИМОСТИ РА ... 26

Edik Minasyan - ARMENIAN-TURKISH RELATIONS DURING THE YEARS OF INDEPENDENCE OF THE RA 28

Էդուարդ Զոհրաբյան - ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ՓՈԽԱԿԵՐՊՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1930-1980-ԱԿԱՆ ԹԹ. 31

Эдуард Зограбян - ПРОЦЕСС ИДЕОЛОГИЧЕСКОЙ ТРАНСФОРМАЦИИ АРМЯНСКОГО ОБЩЕСТВА В СОВЕТСКОЙ АРМЕНИИ С 1930 ПО 1980-ЫЕ ГОДЫ 39

Eduard Zohrabyan - THE PROCESS OF IDEOLOGICAL TNANSFORMATION OF SOCIIETY IN Soviet Armenia in 1930-1980 39

Ֆելիքս Մովսիսյան - ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՄԻՏՔԸ 1840-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԻՐԼԱՆԴԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՇԱՐԺՄԱՆ ՄԱՍԻՆ 40

Феликс Мовсисян - АРМЯНСКАЯ ОБЩЕСТВЕННАЯ МЫСЛЬ ОБ ИРЛАНДСКОМ НАЦИОНАЛЬНОМ ДВИЖЕНИИ 1840-Х ГОДОВ 57

Feliks Movsisyan - ARMENIAN PUBLIC OPINION ON THE IRISH NATIONAL MOVEMENT OF THE 1840s 57

Валерий Тунян - ПОБОРНИКИ ОТРИЦАНИЯ ГЕНОЦИДА АРМЯН 59

Վալերի Թունյան - ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՐԺՄԱՆ ՁԱՏԱԳՈՎՆԵՐԸ 64

Valery Tunyan - DEFENDERS OF THE DENIAL OF THE ARMENIAN GENOCIDE 64

Վանիկ Վիրաբյան - ԱԶԳԱՄԻՋՅԱՆ ՁԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԱՆՏԱՆՏԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ 1917 Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՇՐՋՈՒՄԻՑ ՀԵՏՈ 65

Ваник Вирабян - МЕЖЭТНИЧЕСКИЕ СОБЫТИЯ И АНТАНТОВСКИЕ ГОСУДАРСТВА В ЗАКАВКАЗЬЕ ПОСЛЕ ОКТЯБРЬСКОЙ РЕВОЛЮЦИИ 1917 ГОДА 82

Vanik Virabyan - INTERETHNIC DEVELOPMENTS AND THE ENTENTE STATES IN TRANSCAUCASIA AFTER THE OCTOBER 1917 REVOLUTION 82

Սարգիս Գրիգորյան – ԱԴՐԲԵՋԱՆՑԻ ԻՍԼԱՄԱԿԱՆՆԵՐԻ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՎԿԱՍՈՒՄ ԵՎ ՄԵՐՁԱԿՈՐ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ 84

Саргис Григорян - АКТИВНОСТЬ АЗЕРБАЙДЖАНСКИХ ИСЛАМИСТОВ НА КАВКАЗЕ И БЛИЖНЕМ ВОСТОКЕ 91

Sargis Grigoryan – ACTIVITY OF AZERBAIJANI ISLAMISTS IN THE CAUCASUS AND IN THE MIDDLE EAST 92

Նարա Սարգսյան - ՀԱՄԻԴՅԱՆ ՁԱՐԴԵՐԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐՏԱՑՈԼՈՒՄԸ ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐՅԱՆԻ «ԿԱՐՄԻՐ ԺԱՄՈՒՑ» ՎԻՊԱԿՈՒՄ 93

Нара Саргсян – ОТРАЖЕНИЕ ПСИХОЛОГИЧЕСКОГО ВОЗДЕЙСТВИЯ ХАМИДИЙСКОЙ РЕЗНИ В ПРОИЗВЕДЕНИИ АРПИАР АРПИАРЯНА “БАГРОВОЕ ПРИНОШЕНИЕ” 101

Nara Sargsyan – THE REFLECTION OF PSYCHOLOGICAL INFLUENCE OF HAMIDIAN MASSACARES IN ARPIAR ARPIARYAN'S NOVELETTE "THE CRIMSON OFFERING" 101

Էդգար Չախոյան - Վրաստան-ԱՄՆ դիվանագիտական հարաբերությունները Միխեիլ Սաակաշվիլիի նախագահության առաջին շրջանում (2004-2007 թթ.) 102

Эдгар Чахоян – ДИПЛОМАТИЧЕСКИЕ ОТНОШЕНИЯ ГРУЗИИ И США ПРИ ПЕРВОМ ПРЕЗИДЕНТСКОМ СРОКЕ МИХАИЛА СААКАШВИЛИ (2004-2007 гг.) 112

Edgar Chakhoyan - DIPLOMATIC RELATIONS BETWEEN GEORGIA AND THE USA DURING THE FIRST PERIOD OF THE PRESIDENCY OF MIKHAIL SAAKASHVILI (2004-2007) 113

Арман Сафарян – О НЕКОТОРЫХ ОСОБЕННОСТЯХ КОНВЕРГЕНТНОЙ И МУЛЬТИМЕДИЙНОЙ ЖУРНАЛИСТИКИ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ 114

Արման Սաֆարյան – ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՆՎԵՐԳԵՆՏ և ՄՈՒԼՏԻՄԵԴԻԱՅԻՆ ԼՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ 118

Safaryan Arman – ON SOME FEATURES OF CONVERGENT AND MULTIMEDIA JOURNALISM IN THE REPUBLIC OF ARMENIA 118

Անդրանիկ Եսայան – ԻՐԱՎԻՃԱԿԸ ՀՅՈՒՍԻՍԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ XVIII Դարի ԱՌԱՋԻՆ ՔԱՌՈՐԴԻՆ 119

Андраник Есаян – СИТУАЦИЯ В СЕВЕРО-ВОСТОЧНОЙ АРМЕНИИ В ПЕРВОЙ ЧЕТВЕРТИ 18 ВЕКА 125

Andranik Yesayan – THE SITUATION IN NORTHEASTERN ARMENIA IN THE FIRST QUARTER OF THE 18-TH CENTURY 126

Տարոն Սաքոյան - ԹՈՒՐՔԻԱՅԻ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՇԱՀԵՐՆ ՈՒ ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՆՈՐ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ (2010-2016) ... 127

Тарон Сакоян - ИНТЕРЕСЫ И ПРОТИВОРЕЧИЯ ТУРЦИИ И РОССИИ НА ЮЖНОМ КАВКАЗЕ В НОВЫХ ГЕОПОЛИТИЧЕСКИХ РЕАЛИЯХ (2010-2016) 136

Taron Sakoyan - INTERESTS AND CONTRADICTIONS BETWEEN TURKEY AND RUSSIA IN THE SOUTH CAUCASUS IN NEW GEOPOLITICAL REALITIES (2010-2016) 136

Majid Karimi - THE ETIMOLOGY AND ORIGINS OF THE NAME NAKHICHEVAN FROM THE HISTORICAL SOURCES 137

Մաջիդ Քարիմի - ՆԱԽԻՋԵՎԱՆ ԱՆՎԱՆ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ և ԾԱԳՈՒՄԸ ԸՍՏ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ 147

Маджид Карими - ЭТИМОЛОГИЯ И ПРОИСХОЖДЕНИЕ НАЗВАНИЯ НАХИДЖЕВАН ПО ИСТОРИЧЕСКИМ ИСТОЧНИКАМ 147

Օֆելյա Դարբինյան - ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅԵՐԻ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ 148

Офелия Дарбинян - ОСОБЕННОСТИ РЕПАРТАЦИИ ЛИВИНСКИХ АРМЯН, РЕЗУЛЬТАТЫ И ПОСЛЕДСТВИЯ (1946-1949 ГГ.) 158

Ofelya Darbinyan - PECULIARITIES, RESULTS AND CONSEQUENCES OF THE REPATRIATION OF THE LEBANESE-ARMENIANS (1946-1949) 158

Արևշատ Մինասյան - ՈՒՐՈՒԳՎԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ 159

Аревшат Минасян - АРМЯНСКАЯ ОБЩИНА УРУГВАЯ 164

Arevshat Minasyan - THE ARMENIAN COMMUNITY OF URUGUAY 164

Միքայել Միքայելյան - ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԱՏԹԵՈՍ II ԻԶՄԻՐԼՅԱՆԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ՌՈՒՍԱՑ ԿԱՅՍՐ ՆԻԿՈԼԱՅ II-Ի ՀԵՏ 166

Микаел Микаелян - ВСТРЕЧА КАТОЛИКОСА ВСЕХ АРМЯН МАТТЕОСА II ИЗМИРЛЯНА С РОССИЙСКИМ ИМПЕРАТОРОМ НИКОЛАЕМ II 172

Mikayel Mikayelyan - MEETING OF CATHOLICOS OF ALL ARMENIANS MATTEOS II IZMIRLYAN WITH RUSSIAN EMPEROR NICHOLAS II 172

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ / АРХЕОЛОГИЯ И ЭТНОГРАФИЯ / ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

Սամվել Մկրտչյան - ԷԹՆԻԿ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՏՄԱԿԱՆ ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՀԱՅՈՑ ՏՈՆԱԾԻՍԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹՈՒՄ 173

Самвел Мкртчян – ПРОЯВЛЕНИЕ ЭТНИЧЕСКОЙ ИДЕНТИЧНОСТИ И ИСТОРИЧЕСКОЙ ПАМЯТИ В АРМЯНСКОЙ ПРАЗДНИЧНООБРЯДНОЙ КУЛЬТУРЕ 178

Samvel Mkrtchyan - MANIFESTATIONS OF ETHNIC IDENTITY AND HISTORICAL MEMORY IN THE ARMENIAN FESTIVAL AND RITUAL CULTURE 178

ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ / УЧЕБНО-МЕТОДИЧЕСКИЙ / EDUCATIONAL-METHODOLOGICAL

Մերի Հովհաննիսյան - ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 180

Мери Оганнисян - *ОСОБЕННОСТИ ПРОЕКТНОГО ОБУЧЕНИЯ* 186

Meri Hovhannisyan - PECULIARITIES OF PROJECT-BASED LEARNING 186

ԳԻՏԱԿԱՆ ԿՅԱՆՔ

ԳԻՏԱԺՈՂՈՎ ՆՎԻՐՎԱԾ ԱՆՎԱՆԻ ՊԱՏՄԱԲԱՆ ԱՐՏԱԿ ՄՈՎՍԻՍՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ .. 188
ՏԵՂԻ Է ՈՒՆԵՑԵԼ ՊԱՏՄԱԲԱՆԻ ՕՐՎԱՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀՆԳՕՐՅԱ ԳԻՏԱԺՈՂՈՎԸ 190
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ ՏԵՂԻ Է ՈՒՆԵՑԵԼ ՀԱՅՐԱՊԵՏ ՄԱՐԳԱՐՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ 192

ՄԵՐ ԵՐԱԽՏԱՎՈՐՆԵՐԸ

НА ПЕРЕКРЕСТКЕ ИСТОРИЧЕСКИХ И ЕСТЕСТВЕННЫХ НАУК 194

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ 196
INFORMATION ABOUT THE AUTHORS 197

«ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ» ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍԻ ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ ՀԱՐԹԱԿՈՒՄ ԳՐԱՆՑՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ 198

Ֆելիքս Մովսիսյան

ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՄԻՏՔԸ 1840-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԻՌԼԱՆԴԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՇԱՐԺՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմնաբառեր. Իռլանդիա, ազատություն, շարժում, ռիփիլ, «Երիտասարդ Իռլանդիա», «Միացյալ իռլանդացի», հայ մամուլ, հասարակական միտք:

1840-ական թթ. իռլանդական ազգային շարժումը լայն արձագանք է գտել այդ ժամանակի հայ պարբերական մամուլում: Եվրոպական մամուլի հրապարակումներից և ստացված տեղեկություններից հայկական պարբերականները լավատեղյակ էին Իռլանդիայում տեղի ունեցող քաղաքական, սոցիալական և կրոնական իրադարձությունների մասին: Ըստ նրանց տեղեկությունների՝ իռլանդական ազգային շարժման հիմնական պատճառներն էին. 1847 թ. աննախադեպ սովը, 1800 թ. անգլո-իռլանդական «Ունիայի ակտի» չեղարկումը, անկախ պառլամենտ ստեղծելու ձգտումը և իռլանդացի կաթոլիկների էմանսիպացիան: Իռլանդական շարժմանն անդրադառնում էին առաջին հերթին հայ ազգային-պահպանողական ուղղվածության պարբերականները:

Այսպես, Վիեննայի Մխիթարյանների «Եվրոպա» թերթի «կշռադատող և հեռատես» խմբագիրները անկողմնակալ և օբյեկտիվ դիրքերից՝ «եվրոպական ոճով և վարպետությամբ» էին լուսաբանում իռլանդացիների պայքարը: Նրանց կարծիքով՝ սովի, համաճարակի և աղքատության պայմաններում «Ռիփիլ» ընկերությունը, «Երիտասարդ Իռլանդիա» կազմակերպությունը փորձում էին խաղաղ ճանապարհով վերացնել Ունիան, բայց անհաջողություն կրելով՝ ապստամբություն բարձրացրին: Վենետիկի Մխիթարյանների «Բազմավէպ» ամսագրի համաձայն՝ իռլանդացիներն ուզում էին ամբողջությամբ տապալել անգլիական լուծը և դառնալ ինքնիշխան երկիր:

Ըստ քաղաքական և բանասիրական ուղղվածություն ունեցող թիֆլիսյան «Կովկաս» շաբաթաթերթի՝ իռլանդացիները, միավորվելով Անգլիայի հետ, կորցրին իրենց անկախությունը և այդ օրվանից հայտնվեցին աղետալի դրության ու ծայրահեղ կարիքի մեջ: Կոստանդնուպոլսի Հայոց պատրիարքարանի պաշտոնական օրգան «Հայաստան» թերթը, իռլանդական շարժումը խռովություն անվանելով, գալիս է այն եզրակացության, որ «Երիտասարդ Իռլանդիա» «ազատասեր միությունը», ոգևորված ֆրանսիական փետրվարյան հեղափոխության հաղթանակով, ամեն ջանք գործադրեց զինված պայքարի միջոցով ազատագրվելու համար:

Զմյուռնիայի հայերի «Արշալույս Արարատեան» պարբերականը գիտակցում էր անկախության հասնելու իռլանդացիների ձգտումները և հասկանում էր, որ «Ռիփիլ» ընկերությունը ձգտում էր սահմանադրական եղանակով հասնել Իռլանդիայի քաղաքական անկախությանը:

Հնդկահայերի «Ազգասեր» և «Ազգասեր արարատյան» պարբերականները իրենց համառոտ հրապարակումներում քննադատում էին Անգլիայի գաղութային քաղաքականությունը և իռլանդական բնակչության նկատմամբ բռնությունները: Նրանք կարծում էին, որ իռլանդացիները ցանկանում էին ազատվել անգլիական լծից և ստեղծելով անկախ հանրապետություն՝ ինքնուրույն կառավարել իրենց երկիրը: «Ազգասեր արարատյանը» ծաղրում էր իռլանդացի ապստամբների զգուշավորությունը, որի արդյունքում «լեռը մուկ ծնեց»:

Իռլանդական ազգային շարժումն իրենց հրապարակումներում գովերգում էին հայ ժողովրդավարական հոսանքի գործիչները՝ Միքայել Նալբանդյանը և Մաթեոս Մամուրյանը: Մ. Նալբանդյանը քննադատում էր Անգլիայի քաղաքականությունն Իռլանդիայում, որի ազատասեր ժողովուրդն արժանի է համակրանքի: Նա անարգանքի սյունին էր գամում անգլիական իշխանություններին, որոնք դատապարտում էին ազատության ձգտող իռլանդացի խռովարարներին: Ըստ Մ. Մամուրյանի՝ Անգլիան լուծարել էր իռլանդական պառլամենտը և զրկել իրավունքներից կաթոլիկներին: Նա ցավով էր արձանագրում աղետալի դրությունը Իռլանդիայում, որն անընդհատ հարստահարում ու թալանում էին անգլիական իշխանությունները: Այս իրավիճակից միակ ելքը նա համարում էր ապստամբությունը:

ՄՈՒՏՔ

XIX դարի առաջին կեսին եվրոպական երկրների մեծ մասում սոցիալ-տնտեսական և հասարակական-քաղաքական լուրջ տեղաշարժեր տեղի ունեցան, որոնք 1848 թ. հանգեցրին հեղափոխական ու ազգային-ազատագրական շարժումների: Դրանցից զերծ չմնաց նաև Բրիտանական կայսրության մաս կազմող Իռլանդիան, որտեղ մինչ 1840-ական թվականները հասարակության «վերնախավը»՝ բուրժուազիան և ազնվականության մի մասը, ազգային շարժմանը մասնակցում էր «Կաթոլիկական միության» միջոցով: Իռլանդական ազգային շարժման լիբերալ թևի առաջնորդ Դենիել Օ'Կոննելլի (1775-1847) ստեղծած այս միությունը 1823-1829 թթ. հանդես էր գալիս հանուն կաթոլիկների ու բողոքականների իրավահավասարության և Իռլանդիայի ու Անգլիայի միջև 1800 թ. կնքված ունիայի (դաշինքի) վերացման[1]: 1828 թ. մարտի 24-ին անգլիական խորհրդարանը, Իռլանդիայում քաղաքացիական պատերազմից խուսափելու նպատակով օրենք ընդունեց կաթոլիկների էմանսիպացիայի մասին: 1834 թ. Համայնքների պալատում Դ. Օ'Կոննելլի՝ ունիան վերացնելու փորձն անհաջողության մատնվեց: 1841 թ. Դ. Օ'Կոննելլի նախաձեռնությամբ ստեղծվեց ռիփիլականների (repeal – անջատել, վերացնել, չեղյալ հայտարարել) ազգային միություն, որի գլխավոր քաղաքական պահանջը սահմանադ-ական ճանապարհով ունիայի չեղարկումն էր: 1842 թ. մայիսի 2-ին անգլիական չարտիստները Համայնքների պալատ ներկայացրած «Ժողովրդական խարտիայում» առաջ քաշեցին ունիան վերացնելու պահանջ:

1842 թ. հոկտեմբերին ռիփիլականների միության անդամ իռլանդացի ազգայնականներ, լրագրողներ Չարլզ Դաֆֆին (1816-1903), Ջոն Դիլլոնը (1814-1866) և անգլիացի փաստաբան Թոմաս Դևիսը (1814-1845) Դուբլինում հիմնեցին «Ազգ» շաբաթաթերթը, որի նպատակն էր ազգային հենքի վրա նպաստել Իռլանդիայում հասարակական կարծիքի ձևավորմանը և համատեղել ազգային հպարտությունն ու ազգային ինքնագիտակցությունը: Նրանք բարյացակամ վերաբերմունք ունեին անգլիական խորհրդարանի անդամ, Դուբլինի լորդ-քաղաքագլուխ Դ. Օ'Կոննելլի նկատմամբ, որը իռլանդացիների շրջանում «ազատարարի» և «էմանսիպատորի» համբավ ուներ, բայց դեմ էր հեղափոխական պայքարին ու կողմ էր Իռլանդիայում կարգուկանոնի հաստատմանը: Դ. Օ'Կոննելլը և անգլիական խորհրդարանում իռլանդական պատգամավորական խմբակցությունը կարծում էին, որ հանդես գալով վարչապետ լորդ Մելբուրնի (1798-1848) գլխավորած վիգերի կաբինետի վարած քաղաքականության պաշտպանությամբ՝ կարող են օրենսդրական ճանապարհով հասնել Իռլանդիայի ինքնակառավարմանը[2]:

Դ. Օ'Կոննելլի քաղաքական դիրքորոշումից դժգոհ մի խումբ երիտասարդ ռեփիլականներ, որոնք համախմբվել էին «Ազգ» շաբաթաթերթի շուրջ, դեռևս 1839 թ. Դուբլինի քոլեջում հիմնել էին «Պատմական ընկերություն»: Նրանք գրող, լրագրող Թոմաս ՄաքՆևինի (1814-1848), փաստաբան Ջոն Միթչելի (1815-1875), Ջոն Դիլլոնի, Չարլզ Դաֆֆիի և Թոմաս Դևիսի գլխավորությամբ համախմբվեցին «Երիտասարդ Իռլանդիա» կազմակերպությունում: Այն իր կառուցվածքով, գործունեության բնույթով ու նպատակադրությամբ շատ նման էր 1830-ական թթ. իտալական հայրենասիրական շարժման գաղափարախոս և կազմակերպիչ Ջուզեպպե Մացցինիի (1805-1872) գլխավորած «Երիտասարդ Իտալիա» գաղտնի կազմակերպությանը: «Երիտասարդ Իռլանդիա» ընկերությունն իր գլխավոր նպատակը համարում էր «ազգային ոգու վերածնունդը», հանդես էր գալիս անգլո-իռլանդական դաշինքը վերացնելու և բոլոր իռլանդացիներին միասնական անկախ պետության մեջ միավորելու օգտին: Եթե Դ. Օ'Կոննելլի գլխավորած շարժումը նպատակ էր հետապնդում Իռլանդիայի համար ապահովել «լավ կառավարում կամ ունիայի չեղարկում», ապա «Երիտասարդ Իռլանդիան» հանդես էր գալիս «ունիայի չեղարկում կամ անջատում» կարգախոսով[3]: 1846 թ. վերջերին ռիփիլականների ընկերությունը տրոհվեց, որից առանձնացած «երիտասարդ իռլանդացիները» 1847 թ. մայիսի 13-ին ստեղծեցին «Իռլանդական համադաշնություն» ինքնուրույն կազմակերպությունը: «Համադաշնությունը» պետք է բացարձակ անկախ լիներ անգլիական բոլոր կուսակցություններից, պաշտպաներ իռլանդացիների ազգային շահերը, հասներ նրանց անկախությանը հասարակական կարծիքի օրենսդրականության ուժով, համախմբեր բոլոր իռլանդացիներին, օգտագործեր նրանց քաղաքական, սոցիալական և բարոյական ազդեցությունը, կրոնական

[1] Տե՛ս Блэк Дж., История британских островов. Пер. с англ., СПб., 2008, с. 348:

[2] Տե՛ս Джексон Т. А., Борьба Ирландии за независимость. Пер. с англ., М., 1949, с. 198-202; История Ирландии. Отв. ред. Л. И. Гольман, М., 1980, с. 194:

[3] Տե՛ս Джексон Т. А., указ. соч., с. 202; Революции 1848-1849. Под ред. Ф. В. Потемкина и А. И. Молока, т. II, М., 1952, с. 301:

թեմաներով բանավեճեր չծավալեր[1]: Համադաշնության չափավոր թևը՝ Ուիլյամ Օ'Բրայենի (1803-1864), Չարլզ Դաֆֆիի, Մայքլ Դոհենի (1805-1863), Թոմաս Միգերի (1823-1867) գլխավորությամբ, ձգտում էր ազգային զանգվածային շարժումը տանել համոզմունքի ուժով, բոլոր խավերի հետ համագործակցած և «սահմանադրական գործողությունների» ճանապարհով: Արմատական թևը գլխավորող Ջոն Միթչելը (1815-1875), Դևին Ռեյլին (1823-1854) և Ջեյմս Լալորը (1809-1849) կողմնակից էին զինված ապստամբության: Նրանք առաջ էին քաշում «Իռլանդիան իռլանդացիների համար» կարգախոսը, որի գլխավոր նպատակը զինված պայքարի ճանապարհով դեմոկրատական հանրապետության հռչակումն էր: Ջ. Լալորը, որին Դ. Օ'Կոննելլը համարում էր «այդ ժամանակի խորաթափանց իռլանդական միտքը», հայտարարում էր, որ իր նպատակը ոչ թե Անգլիայի և Իռլանդիայի «դաշինքի վերացումն է, այլ՝ անկախության նվաճումը»[2]:

1848 թ. փետրվարի 5-7-ը Դուբլինում կայացած Համադաշնության ժողովում իռլանդական ազատագրական շարժման ուղեգծի վերաբերյալ ընդունվեց Ուիլյամ Օ'Բրայենի ծրագիրը, որը նախատեսում էր հասնել Իռլանդիայի օրենսդրական անկախությանը և զուտ սահմանադրական ճանապարհով ներկայացվել խորհրդարանում[3]: 1848 թ. իռլանդական ազգային-ազատագրական շարժմանը նախորդեցին երեք անբերրի տարիներ և 1847 թ. առևտրաարդյունաբերական ծանր ճգնաժամը, որի հետևանքով երկրում ահավոր սով սկսվեց: Անգլիացիներն այն անվանում են «իռլանդական սովամահություն», իսկ իռլանդացիները՝ «մեծ սով», որը շուրջ 800 հազար մարդկային կյանք խլեց: Սովի և ԱՄՆ աննախադեպ վտարանդիության հետևանքով Իռլանդիայի բնակչությունը երկու միլիոնով պակա-սեց[4], ժողովրդական զանգվածային հուզումներ սկսվեցին: 1848 թ. փետրվարի ֆրանսիա-կան հեղափոխության հաղթանակից ոգևորված իռլանդական հայրենասիրական և անջատողական ուժերը մի շարք քաղաքներում անցկացրին հանրահավաքներ, որոնց մասնակիցները կոչ էին անում հետևել ֆրանսիացիների օրինակին և պայքար սկսել Իռլանդիայի ազատագրման համար:

ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՄԻՏՔԸ ԻՌԼԱՆԴԱԿԱՆ ՇԱՐՇԺՄԱՆ ՄԱՍԻՆ

Ժամանակի հայ հասարակական միտքը բավականաչափ իրազեկ էր 1848 թ. Իռլանդիայում ծավալված ազգային-ազատագրական շարժման դրդապատճառներին: Նախքան շարժման ծավալումը Վենետիկի Մխիթարյան միաբանները գրում էին անգլո-իռլանդական հակամարտության վաղեմության մասին: Մխիթարյաններից «Տարեգրություն» պարբերականի խմբագիր Ղուկաս Ինճիճյանը (1758-1833), անդրադառնալով անգլո-իռլանդական ունիայի կնքմանը, գրում է. «Աս տարի Իռլանտային կառավարությունը միացավ ինկլիզի ատային կառաւարութեան հետ. կառաւարութեան անունը պիտի որ դնեն թագաւորական բառլամենտ պրիդանեան կղզեաց»[5]: Ղ. Ինճիճյանը թույլ է տալիս անճշտություն, քանի որ Իռլանդիայի միավորումից հետո Անգլիան կոչվում էր Մեծ Բրիտանիայի Միացյալ թագավորություն: Նրա դիտարկմամբ այդ միավորումն առաջ բերեց իռլանդացիների սաստիկ ատելությունն անգլիացիների նկատմամբ, քանզի նրանք չէին հաշտվում իրենց վիճակի հետ և ապստամբում էին: 1801 թ. ապրիլին Լոնդոնում սկսված խռովությունը բրիտանական խորհրդարանում համեմատում էին «Իռլանտայի պէս», որի մասնակիցները «իռլանտացւոց պէս շատ մարդ երդումն կընեն»[6]: Ընդունելով, որ «հայրենասիրությունը» ուժեղ է «բարձրամիտ ինկլիզներուն» մեջ, Ղ. Ինճիճյանը միաժա-մանակ ընդգծում է նրանցից շոտլանդացիների ու իռլանդացիների «դժգոհությունները»: Անդրադառնալով իռլանդացիների շարժմանը՝ նա գրում է. «Ատելութիւն անհնարին իռլանդացւոց մէջ, զիրենք ճնշողներուն դեմ»: Այս հակամարտությունում նրա քողարկված համակրանքն իռլանդացիների կողմն է, քանզի անգլիացիներին բնորոշ է վաճառականության ոգին և «անարգական քամահրանք մը ամէն ազգի դէմ»[7]: Ղ. Ինճիճյանը ոչ բարեհաճ վերաբերմունք է դրսևորում անգլիական քաղաքականության նկատմամբ՝ մեջբերելով Անգլիայի վարչապետ Ուիլյամ Փիթթ Կրտսերի (1759-1806) հետևյալ արտահայտությունը. «Իռլանտան մեզի հետ

[1] Տե՛ս Джексон Т. А., указ. соч., с. 215; Революции 1848-1849, т. II, с. 302:
[2] История Ирландии, с. 199; Революции 1848-1849, т. II, с. 303.
[3] История Ирландии, с. 199-200; Революции 1848-1849, т. II, с. 302-304.
[4] Блэк Дж., указ. соч., с. 349; История Великобритании. Под ред. Кеннета О. Моргана. Пер. с англ., М., 2008, с. 470; Мортон А., История Англии. Пер. с англ., М., 1950, с. 380.
[5] «Տարեգրություն», Վենետիկ, 1801, էջ 22:
[6] «Տարեգրություն», 1802, էջ 45:
[7] «Եղանակ բյուզանդյան», Վենետիկ, 1813, էջ 143-144:

միացուցինք. Հնտստան Դիբուս Սահիպին երկիրը առինք. ճեաքօպինութիւնը գետինը կործանեցինք»[1]: Վկայակոչելով Անգլիայի պատմության նմանատիպ դրվագները՝ նա եզրակացնում է. «Աս ազգին պատմութիւնը կըցըցնէ, որի ինկլիզը անհանդարտ է բարուք, միշտ մէկի մը հետ կռիւ պիտոր ընէ, կամ իր քովիննէրուն հետ, կամ իր հետ»[2]:

1840-ական թթ. հայ հասարակական մտքի ու պարբերական մամուլի պատմության մեջ մի նոր շրջան սկսվեց. դեմոկրատական գաղափարախոսությունը վերելք ապրեց, իսկ մամուլի ուղղության միօրինակությունը հաղթահարվեց: Արևմտյան Եվրոպայում Մխիթարյան միաբանությունը հրատարակեց «Բազմավեպ» և «Եվրոպա» պարբերականները: Կ. Պոլսում լույս տեսան «Հայտարար գիր լրո», «Հայաստան», «Հայտարար լրագիր», «Սուրհանդակ բյուզանդյան», Զմյուռնիայում՝ «Արշալույս Արարատյան», «Հայրենասեր», իսկ Հնդկաստանում՝ «Ազգասեր», «Ազգասեր Արարատյան» և «Բանասեր» պարբերականները: Հայ ազգային-պահպանողական հոսանքը ներկայացնող այս պարբերականներն իրենց բովանդակությամբ, ազգային թեմաների արծարծումներով և հրապարակախոսական արվեստի ընդհանուր մակարդակով, մի քայլ առաջ էին «Լրո գրից»: Դրանք իրենց էջերում մշտապես տեղեկություններ էին տալիս եվրոպական պետությունների քաղաքական կյանքում տեղի ունեցած իրադարձությունների մասին:

Մխիթարյանների «Բազմավեպ» հանդեսը 1848 թ. մարտին վենետիկցիների ազատագրական պայքարի պարտությունից հետո գերադասեց «ասկե ետքն ալ պատկառելի ու սիրելի մնալ այս հիւրընկալ երկիրներին յեղափոխութեանց մէջ»[3] և չանդրադարձավ եվրոպական իրադարձություններին: Հանդեսի խմբագիր Գաբրիել վարդապետ Այվազովսկին (1812-1880), հավատարիմ մնալով Մխիթարյանների այս պատգամին, պահպանեց նրանց «բռնած ուղղութիւնը», որ «միշտ կաշկանդել է իւր հեղինակների գրիչը, միշտ արգելք է եղել նոցա ազատ և բազմակողմանի զարգացմանը»[4]:

«Բազմավեպը» հանրամատչելի հանդես էր, քաղաքական իրադարձություններին վերաբերվում էր մեծագույն զգուշությամբ, բծախնդրությամբ և առանձնապես շատ տուրք չէր տալիս դրանց լուսաբանմանը: Պատահական չէ, որ հանդեսն իռլանդական ազգային շարժմանն անդրադարձավ ոչ թե իրադարձությունների ընթացքում, այլ տասնամյակներ անց: «Իռլանտայի խնդիրն» վերնագրով ընդարձակ հոդվածում վերլուծելով 1840-ական թթ. իռլանդական ազգային շարժման դրդապատճառները՝ հանդեսը կարծիք է հայտնել, որ անգլիացիների նկատմամբ իռլանդացիների ատելության պատճառը սոսկ «կրոնից խտրականությունը» չէ, այլ երկու ժողովուրդների անբարյացակամ բնավորությունը և «ներքին քաղաքական պատահարքը»: Որպես այդպիսին հանդեսը նշում է XVII դարում Ստյուարտների արքայատոհմի վերահաստատումը անգլիական գահին, երբ Չարլզ II (1600-1649) թագավորը «մեծապես զայրացած էր Իռլանտիոյ դէմ, որը յեղափոխութեան մէջ չէր ուզած իրեն օգնական ըլլալ և կը պաշտպանէր ազգին չփափագած թագավոր մը: Այն օրուան տրուեցավ Իռլանտիոյ վճիռն»[5]: XIX դարում «Անգլիական լծոյն ավելի ճնշումը» բարդացրեց իռլանդացիների վիճակը, նրանք բազմիցս բողոքեցին անգլիական «լծոյն դեմ», որովհետև դարասկզբում Անգլիայում տեղի ունեցած «ամենայն ազատութիւնք և բարեկարգաթիւն ... բնաւ արծագանք մը չունեցան Իռլանտա»: Կարտոֆիլի հիվանդության պատճառով Իռլանդիայում «ահավոր սով տիրեց», Եվրոպայի պատմության մեջ «անկարելի» մի բան, որն իռլանդացիներին ստիպեց «գաղթել Ամերիկայի անապատները»: Այս ամենի պատճառով XIX դարի առաջին կեսին Իռլանդիայում տիրում էր աղքատություն, գոր-ծազրկություն և սով: Չնայած անգլիական կառավարության որոշ «ազատական պաշտոնյա-ներ ջանացին դարման տանել Իռլանտիոյ բողոքներուն», սակայն նրանց վերքն «այնչափ մեծ է», որը կարող է բուժվել միայն «մեծ ժամանակի» ընթացքում և առհասարակ «դժվարա-բուժելի է»[6]:

Իռլանդական ազգային շարժմանն անմիջականորեն անդրադարձել է 1846-1847թթ. արևելահայ իրականության մեջ լույս տեսած առաջին հայ պարբերականը՝ «Կովկաս» քաղաքական և բանասիրական շաբաթաթերթը: Թիֆլիսահայ այս պարբերականի խմբագիրներ Հակոբ Կարենյանը (1818-1872) և Միքայել Պատկանյանը (1814-1895) աչքի ընկնող հայ գրական, մշակութային գործիչներ էին: Թերթի «պատմական ոճը ծանր, հանդարտ ու

[1] «Տարեգրություն», 1802, էջ 44:
[2] «Եղանակ բյուզանդյան», 1816, էջ 205:
[3] «Բազմավեպ», Վենետիկ, 1848, 1 մայիսի, էջ 141:
[4] Երիցեան Ա., Վենետիկի Մխիթարեանք, Թիֆլիզ, 1883, էջ 131:
[5] «Բազմավեպ», 1882, հ. 40, պր. Ա-Դ, էջ 183:
[6] Նույն տեղում, էջ 186:

չափաւոր կերևար»[1], որի «Արտաքին լուրեր» բաժնի յուրաքանչյուր համարում տպագրվում էին թարմ տեղեկություններ ոչ միայն Ռուսաստանում, այլև աշխարհում տեղի ունեցող քաղաքական իրադարձությունների մասին: Թերթը գրում է, որ ներկայումս իռլանդացիների սրտերում «որջացել է ապստամբութիւն», որոնք հաճախակի են տեղի են ունենում: «Բովանդակ Իրլանդիա կամէր վտարանջել Անգղիոյ», բայց կառավարությունը «պահեաց ցարդ անվրդով խաղաղութիւն»: Չնայած դրան՝ տեղական իշխանությունները չեն կարողանում «անտի մարտնչել ընդ խուժագուժ ամբոխին», որ նրանց վրա հարձակվում է «մեծաւ կատաղութեամբ»: Այդ պատճառով շատ տեղերում «բազում արիւնահեղութիւն պատահի»[2]:

Փաստելով 1847 թ. աննախադեպ սովը, որը «բռնանայ Իրլանդիա», «Կովկասը» տպագրում է փետրվարի 8-ին անգլիական խորհրդարանում «սրտառուչ եղանակաւ» հանդես եկած իռլանդացի Դ. Օ'Կոննելլ «երևելի պատգամավորի» ելույթից մի հատված: Ըստ թերթի՝ նա երկար ժամանակ խոսում է «ընդդեմ թագաւորութեանն Անգղիոյ՝ որպէս պաշտպան Իրլանդիոյ»: Դ. Օ'Կոննելլն իր ելույթում նկարագրեց «զպատկեր թշուառութեանց աշխարհին Իրլանդիոյ» և անգլիական իշխանություններին զգուշացրեց, որ եթե չեն ցանկանում իռլանդացիներին օգնության ձեռք մեկնել, ապա «անհնար կլինի սանձել զամբոխ ռամկին» և «սովատանջ խառնիճաղանճ ամբոխին»[3]:

Հավաստի ներկայացնելով Դ. Օ'Կոննելլի ճառը Համայնքների պալատում՝ «Կովկասը» եզրակացնում է, որ Անգլիայի հետ 1800 թ. միավորվելով՝ Իռլանդիան «ոչ միայն կորոյս զիւր ազատութիւն», այլև կրում է այնպիսի նեղություններ, որ հազիվ թե եվրոպական մեկ այլ երկիր «կրեալ իցե երբեք յետ նորոգութեան թագաւորութեանց նոցա»[4]:

Իռլանդական ազգային շարժմանն անդրադարձած արևմտահայ պարբերականներն իրենց հրապարակումներում միահամուռ կարևորում են Դ. Օ' Կոննելլի դերն ազգային գաղափարախոսություն ձևավորելու, ռիփիլական շարժում նախաձեռնելու և անգլիական խորհրդարանում իռլանդական խնդիրը պարբերաբար բարձրաձայնելու հարցում: Այդ պարբերականների լրատվության հիմքում ընկած են հիմնականում եվրոպական մամուլի հրապարակումներն ու ստացված լուրերը, որոնք նույնությամբ տպագրում էին կամ էլ վերաշարադրում՝ ջանալով պահպանել անկողմնակալություն: Հայ պարբերականներն առանձին դեպքերում չէին խուսափում դրանց վերաբերյալ կարծիք հայտնելուց և գնահատական տալուց:

1840-ական թթ. լույս տեսած արևմտահայ պարբերականների շարքում «Արշալույս Արարատյանն» առաջին թերթն էր, որ հասարակական կյանքի արտացոլմամբ, նյութերի խնամքով ընտրության, դասակարգման ու մատուցման ձևով հանդես էր գալիս որպես նոր որակ հայ հրապարակախոսության և մամուլի բնագավառում: Այս թերթը լույս ընծայելու «օրեն ի վեր յուր սկզբունքը չէր փոխած երբեք[5]», «իր պահպանողական ուղղությունը չի կերպաբանել մեկընդմիշտ տրված ձևով»[6]:

Քաղաքական, բանասիրական և առևտրական ուղղություն ունեցող այս թերթի խմբագիրը հրապարակախոս և հասարակական գործիչ Ղուկաս Պալտազարյանն (1810-1878) էր: Նա եվրոպական ազգային-ազատագրական պայքարի բուն տարիներին՝ 1840-1850-ական թթ., զգուշորեն հակադրվում էր հետադիմությանը և թույլ էր տալիս ազատամտություն: Ազգային զարթոնքի գործընթացները, արևմտահայ մտավորականության շփումները Եվրոպայում և այնտեղ 1840-ական թթ. տիրող հասարակական-քաղաքական տրամադրություններն ու ազգային վերածնության շարժումներն այն հենքն էին, որոնց վրա խարսխվում էր Ղ. Պալտազարյանի ազատամտությունն ու պայմանավորում նրա պարբերականի երկփեղկվածությունը: Մի կողմից նա ընդարձակ նյութեր է տպագրում 1848թ. եվրոպական հեղափոխությունների մասին, ապստամբ փարիզցիներին անվանում «հաղթական վեհանձն ժողովուրդ» [7] , անսքող համակրանք դրսևորում իտալական ազատագրական պայքարում «մեծահամբաւ Կարիպալտի քաջ և իմաստուն զորապետի»

[1] Հ. Գրիգորիս վ. Գալէմքէրեան, Պատմութիւն հայ լրագրութեան, ի սկզբանե մինչև մեր օրերը (1794-1860), հ. Ա, Վիեննա, 1893, էջ 91:

[2] «Կովկաս», Թիֆլիս, 1847, 1 փետրվարի, թիվ 5, էջ 19:

[3] «Կովկաս», 1847, 8 մարտի, թիվ 10, էջ 37:

[4] «Կովկաս», 1847, 26 ապրիլի, թիվ 17, էջ 68:

[5] «Արշալույս Արարատյան», Զմյուռնիա, 1878, թիվ 1093:

[6] Խառատյան Ա. Ա., Արևմտահայ հասարակական մտքի և հրապարակախոսության պատմությունից, Ե., 1980, էջ 15:

[7] Տե՛ս «Արշալույս Արարատյան», 1848, թիվ 307:

...ձեռք բերած «քաջագործական հաղթությունների» և հունգարական ազատագրական շարժման նկատմամբ, մյուս կողմից՝ դժգոհություն դրսևորում չարտիստական շարժման ու Ջուզեպպե Մացցինիի ելույթների առթիվ[1]: Ղ. Պալտազարյանի թերթի «զգոյշ և խոհեմ ընթացքը»[2], եվրոպական քաղաքական իրադարձությունների նկատմամբ երկփեղկված դիրքորոշումը նկատելի է նաև իռլանդական ազգային-ազատագրական շարժման հարցում:

«Արշալույս Արարատյանն» անդրադառնում է Իռլանդիայում անբերրիության հետևանքով 1847 թ. տիրող «դժբաղդ վիճակին», այն շտկելու ուղղությամբ անգլիական խորհրդարանում կայացած քննարկումներին և իռլանդական առանձին խորհրդարան ունենալու համար ծավալված շարժմանը: Թերթը նշում է, որ Դենիել Օկոննելլ «երևելի ատենաբանի» մահը «խիստ մեծ ու տրտմալի տպավորութիւն թողեց ողջ Իռլանդիայում»: Դուբլինի քաղաքային ժողովը երեք շաբաթ չհավաքվեց ի պատիվ նրա հիշատակի[3]: «Արշալույս Արարատյանի» խմբագիրը, «ընմբռնելով ազգային միասնության կարևորությունը» և ելնելով այդ ելակետից, միաժամանակ դեմ էր «ամեն մի պայքարի և մշտապես կոչ էր անում խաղաղվել, միաբանել, շրջահայաց ու խոհական ընթացք վարել»[4]: Այս մտայնությունից ելնելով՝ նա գնահատում է իռլանդացիների պայքարը: Նրա կարծիքով նախընտրելի է, որ իռլանդացիներն իրենց նպատակին հասնեն օրինական ճանապարհով ու բռնությունների չդիմեն: Թերթը ցանկություն է հայտնում, որ ռիփիլի ընկերությունը «տերության կանոնաց դեմ ապօրինաբար գործիքի ձեռք չզարնե՝ ժողովուրդը կառավարության դեմ գրգռելով, քանզի այն ժամանակ Մեծին Բրիտանիոյ խորհրդարանը պիտի պարտավորվի բռնի և խիստ միջոցներ գործածելու հասարակաց անդորրութիւնը ապահովցնելու համար Իռլանդիայի մեջ»[5]:

Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի «Հայաստան» պաշտոնաթերթի լույս տեսնելը 1846 թ. հուլիսի 1-ին դարձավ «արևմտահայ կյանքի կարևորագույն շրջակետերից մեկը» և «նշանակալից երևույթ» հայ մամուլի պատմության մեջ, քանի որ հաջորդեց օտար միսիոներների հայերեն հրատարակած պարբերականներին[6]: Այդ կապակցությամբ Մխիթարյանների «Բազմավեպը» ջանաց հայտնել իր «ուրախակից ըլլալը»[7], իսկ հայտնի լեզվաբան և մատենագետ Գ. Գալեմքյարյանը դա գնահատեց «անհրաժեշտ կարևորություն» պոլսահայ գաղթականության համար: Մխիթարյան միաբանության գործչի կարծիքով «Հայաստան» քաղաքական լրոց կողմանէ չէր այնչափ հարուստ և ստուգապատում: Իր առավելութիւնն էր տեղական քաղաքական և ազգային լուրերն, ազգային պատրիարքարանի կարգադրութիւններն և այլն ընդարձակ ու ճիշտ հրատարակելը»[8]: Իրականում «Հայաստանի» հրատարակվելը հայ հասարակական մտքի և պարբերական մամուլի պատմության համար կարևոր է ոչ միայն վերը նշված հիմնավորմամբ: Թեև Գ. Գալեմքյարյանին չէր բավարարում եվրոպական պետությունների մասին թերթի քաղաքական նյութերի հարստությունը, այնուհանդերձ հարկավոր է փաստել, որ «Հայաստանի» յուրաքանչյուր համարը առատ էր քաղաքական լուրերով: Թերթի խմբագիր հրապարակախոս, բանասեր, թարգմանիչ Հովհաննես Չամուռճյան-Տերոյենցը (1801-1888) քաղաքական հայացքներով խիստ պահպանողական էր, հեղափոխական և ազատագրական շարժումների հակառակորդ: Բայց նա խորագիտակ անձնավորություն էր, տիրապետում էր 12 լեզուների և «եռանդուն հրապարակախոս էր»[9]: Ճիշտ է, նա խմբագրում էր պարբերականի ազատախոհ աշխատակիցների հոդվածները, բայց միաժամանակ թերթը հեռու չէր պահում եվրոպական ազատագրական շարժումների վերաբերյալ նյութերի հրապարակումից: Այս իմաստով թերթն ամբողջովին նրա կամքին չէր ենթարկված և նրա «մտքերի ու հայացքների արտահայտությունը»[10] չէր: Դրա վկայությունը «Հայաստանում» պարբերաբար տպագրվող եվրոպական անցուդարձին նվիրված բազմաբնույթ լուրերն էին: «Հայաստանն» այն սակավաթիվ հայ պարբերականներից է, որ չանտեսեց իռլանդական

[1] Տե՛ս «Արշալույս Արարատյան», 1848, թիվ 309, 314, 327, 1855, թիվ 550:
[2] Հ. Գրիգորիս վ. Գալէմքէրեան, նշվ. աշխ., էջ 58:
[3] «Արշալույս Արարատյան», 1849, 13 հունիսի, թիվ 267:
[4] Հակոբյան Մ. Ն., Զմյուռնահայ պարբերական մամուլը (1839-1860), Ե., 1984, էջ 38:
[5] «Արշալույս Արարատյան», 1849, 5 սեպտեմբերի, թիվ 293:
[6] Տե՛ս Ղուկասյան Վ. Գ., Պոլսահայ մամուլի և հրապարակախոսության սկզբնավորումը (1832-1853), Ե., 1975, էջ 160, 163-164:
[7] Տե՛ս «Բազմավեպ», 1847, թիվ 8:
[8] Հ. Գրիգորիս վ. Գալէմքէրեան, նշվ. աշխ., էջ 94-95:
[9] Կարինյան Ա., «Հայաստան» թերթը (1846 - 1852), «Բանբեր Հայաստանի արխիվների», Ե., 1977, թիվ 3, էջ 183:
[10] Նույն տեղում, էջ 188:

ազատագրական պայքարի լուսաբանումը, թեպետ թերթը «քաղաքական լրոց կողմանե չէր այնչափ հարուստ և ստուգապատում, մանաւանդ եւրոպական տէրութեանց մասին»[1]:

Ըստ «Հայաստանի»՝ «երևելի» Դ. Օ'Կոննելլն իր կենդանության օրոք Իռլանդիայի «ազատութեան համար շատ աշխատեցավ, դատաստանական օրինանց ճամբով քաղաքական ազատութիւններ ուզելով ինկլիզի կառավարութիւնից»: Նա մի ընկերություն ստեղծեց, որը, առանց «բռնութիւն բանեցնելու», միայն օրենքին ապավինելով, «շատ երևելի բաներ ձեռք ձգեց»[2]: Թերթն իրավացի է. Դ. Օ'Կոննելի ստեղծած «Ռիփիլ» ազգային ընկերությունը նպատակ էր հետապնդում հասնել իռլանդական ինքնուրույն խորհրդարանի ստեղծմանը:

«Հայաստանն» անդրադարձել է Ուիլյամ Օ'Բրայենի գլխավորությամբ ստեղծված «Երիտասարդ Իռլանդիա» անունով «ազատասեր ընկերությանը», որը որոշել է «ազատությունը զենքով ձեռք ձգեն»: Դ. Օ'Կոննելլը դեմ դուրս եկավ այս գծին և քանի որ մեծ հեղինակություն ուներ, ժողովուրդը գնաց նրա հետևից: Նրա մահից հետո Զոն Օ'Կոննելլը հոր գործը շարունակեց, բայց քանի որ հոր չափ հարգանք չուներ, ուստի Ու. Օ'Բրայենի կողմը «զորացավ, տեղ-տեղ զենքով բռնություններ ընել սկսան» [3] : «Հայաստանը» նկատի ունի Իռլանդական համադաշնությունը: Բայց թերթը սխալվում էր՝ ասելով, թե այն ձգտում էր զենքի ուժով ազատություն ձեռք բերել: Իրականում համադաշնությունը ձգտում էր հասարակական կարծիքի ուժի և բոլոր իռլանդացիների համախմբման ճանապարհով հասնել բաղձալի անկախության: Սակայն «Հայաստանը» ճիշտ էր նկատում, որ Ֆրանսիայում 1848 թ. փետրվարյան հեղափոխության ազդեցության տակ իռլանդացիները «մեկեն ոտք ելլելու պատրաստություն տեսան»: Նրանք Ֆրանսիայի ժամանակավոր կառավարությունից խնդրեցին «իռլանդացվոց ազատության համար զենքով օգնություն տան», բայց Ա. Լամարթինը հայտարարեց, որ «օտար ազգերի գործերին խառնվելով աշխարհի խաղաղությունը վրդովելու միտք չունի»[4]:

Հավաստի ներկայացնելով Ա. Լամարթինի պատասխանը[5]՝ «Հայաստանը» նկատում էր, որ ֆրանսիական կառավարությունից օգնություն չստանալով՝ իռլանդացիներն սկսել են ինքնուրույն զենք ձեռք բերելու պատրաստություններ տեսնել: անգլիական իշխանություններն Իռլանդայում մեծ նախապատրաստական աշխատանքներ էին տանում, որպեսզի «խռովության» դեպքում այն կանխեն, իսկ Իռլանդիայի հռոմեական եկեղեցականները, Դուբլինի թագավորական ընկերությունը և Մրայս Օ'Կոննելլը շատ էին ջանում, որ «խռովություն չելլե»: Իռլանդիայում «որքան խաղաղասեր, համեստ և խոհեմ մարդիկ կան, անոր կողմն են»,– եզրակացնում է թերթի խմբագիր Հ. Չամուռճյան-Տերոյենցը: Նա համակրանք չի տածում Ու. Օ'Բրայենի նկատմամբ, որը, Փարիզից վերադառնալով, մի «վնասակար սուտ հանեց»՝ հայտարարելով, թե 50 հազար մարդ պատրաստ են ցանկացած ժամանակ իրենց օգնության գալ: Նրա համոզմամբ, եթե իռլանդացիները հավատան Ու. Օ'Բրայենին, ապա նա «իր հայրենյաց կործանիչը կըլլա»[6]:

Ի տարբերություն արևմտահայ ազգային-պահպանողական մամուլի՝ հնդկահայ «Ազգասեր» և «Ազգասեր Արարատյան» պարբերականներն ընդգծված համակրանքով էին պատմում ճնշվող ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումների մասին: Հայ լրագրության առաջին պարբերականի՝ հնդկահայ «Ազդարարի», հրապարակումից (1794 թ.) մինչև 1858 թ. «Հյուսիսափայլի» հանդես գալը «գոյություն ունեցող հայկական բոլոր պարբերականներից ամենաառաջադիմականը Մ. Թաղիադյանի հրատարակություններն են» [7] : «Ազգասեր» և «Ազգասեր Արարատյան» պարբերականների խմբագիր Մեսրոպ Թաղիադյանը (1803-1858)՝ «իբրև հայրենասէր գրագէտ, հնդկահայոց մէջ ամենանշանաւոր անձն էր»[8], որը չէր խորշում անխնա քննադատել եվրոպական միապետություններին: Նա մերկացնում էր Անգլիայի գաղութային քաղաքականությունը, դրսևորում իր ազատասիրական մտորումներն ու պաշտպան կանգնում ճնշվող ժողովուրդների պայքարին: «Ազգասերը» քաղաքական լուրեր ներկայացնելիս, Վիեննայի Մխիթարյանների

---

[1] Հ. Գրիգորիս վ. Գալէմքէրեան, նշվ. աշխ., էջ 94:
[2] «Հայաստան» 1848, 1 մայիսի:
[3] «Հայաստան», 1848, 1 մայիսի:
[4] Նույն տեղում:
[5] Революции 1848-1849, том II, с. 305.
[6] «Հայաստան», 1848, 1 մայիսի:
[7] Ինճիկյան Ա. Մ., Հայ հասարակական կյանքը, կուլտուրան և գրականությունը XVII դարի վերջին քառորդին և XIX դարի առաջին կեսին// «Հայ նոր գրականության պատմություն», հ. 1, Ե., 1962, էջ 58:
[8] Հ. Գրիգորիս վ. Գալէմքէրեան, նշվ. աշխ., էջ 82.

բնութագրմամբ, «քաղաքական մասին կատարելութեան ու շարունակեալ ամբողջ պատմութեանն այնչափ միտ չի դներ[1]: Իռլանդիայում անգլիական իշխանությունների վարած գաղութային քաղաքականության վերաբերյալ թերթի հրապարակումները թեպետ հակիրճ են և պարբերական բնույթ չեն կրում, այնուհանդերձ շատ ուշագրավ են և անաչառ: Դրանք հստակորեն ցույց են տալիս, որ պարբերականի խմբագիրը հանդես է գալիս բռնության ու շահագործման դեմ: «Ազգասերը» 1848 թ. հունվարին նկատել է, որ «Սպառնայ Իռլանդիայ զխստութիւն պատերազմի: Թագուհին ոչ հաճի ընդ առանձին պատերազմ նորոյ Զիռլանդայ, բայց ոչ տայ զպատճառ տհաճութեանն»[2]: Անգամ այս կցկտուր լրատվությունից հետևում է, որ Մեսրոպ Թաղիադյանը խորությամբ գիտեր Անգլիայում ներքաղաքական վիճակը իռլանդական սովին հաջորդած ժամանակաշրջանում: Նրա համոզմամբ իռլանդական ազգային շարժումն այնքան էր խորացել, որ երկրում քաղաքացիական պատերազմի վտանգ էր առաջացել:

«Ազգասերն» ընդգծում էր, որ ֆրանսիական հանրապետությունը, խուսափելով եվրոպական երկրների հետ իր հարաբերությունների բարդացումից, «խոհեմություն» դրսևորեց և մերժեց իռլանդացիների խնդրանքը, «որք հայցէին զձեռն օգնականութեան նոցա ընդդեմ Մեծին Բրիտանիոյ»: Մ. Թաղիադյանը հասկանում էր, որ դա անկայուն վիճակ էր ստեղծում Իռլանդիայում, «բայց յուսամք վաղճանին դէպի բարին եզերել»: Նա հստակորեն ձևակերպում է իռլանդական ժողովրդի ազգային շարժման նպատակը, որը ձգտում էր «զիարդ հնարին նժկահել լծոյ Անգղիոյ և անկախ հասարակապետութեամբ կառավարել զերկիրն»[3]: Նա իրավացի էր. իռլանդական ազգային շարժումը նպատակ էր հետապնդում ձեռք բերելու ազգային ինքնուրույնություն, իսկ շարժման ձախ թևի ներկայացուցիչները ձգտում էին հաստատել դեմոկրատական հանրապետություն:

1840-ական թթ. հրատարակված հայ պարբերականներից ամենից շատ եվրոպական քաղաքական իրադարձություններին տեղեկացված թերթը Մխիթարյանների «Եվրոպան» էր: 1847 թվականից լույս տեսնող այս պարբերականին աշխատակցում էին մի խումբ հայ կաթոլիկ միաբաններ, «խոհական և հեռատես անձինք», որոնցից Ղևոնդ վրդ. Հովնանյանը (1817-1897), Պողոս վրդ. Հովնանյանը (1802-1884), Փիլիպոս վրդ. Ճամճյանը (1819-1853) և Եփրեմ վրդ. Չագըճյանը «եւրոպական ոճով և հմտութեամբ»[4] իրենց հրապարակումներում ջանում էին «հիմիկուան Եւրոպայի խռուութիւնները իրենց բնական՝աղէկ կամ գեշ գունովը նկատել»[5]: Այս իմաստով «Եվրոպան» ուրույն տեղ ունի հայ պարբերական մամուլի պատմության մեջ ամենից առաջ որպես զուտ քաղաքական շաբաթաթերթ, որը 1840-ական թթ. ուշի ուշով հետևում էր Արևմտյան Եվրոպայում ընթացող բոլոր մեծ ու փոքր քաղաքական իրադարձություններին և դրանց վերաբերյալ մանրակրկիտ լուրեր տպագրում: «Եվրոպան» ջանում էր հավատարիմ մնալ պարբերականի հրատարակիչ, արևմտահայ ամիրա Հակոբ Չելեպի Տյուզյանցի (1793-1847) հորդորին՝ գրել «ծանրութեամբ, հանդարտութեամբ, ընտրութեամբ և կարելի եղածի չափ մաքուր ոճով»[6]: Սակայն 1848 թ., երբ եվրոպական գահերեցների դեմ ամենուրեք, այդ թվում՝ Մխիթարյանների հայրենի Վենետիկում, ինչպես նաև Վիեննայում ոտքի ելան ազատատենչ ժողովուրդները, կրոնական այդ միաձույլ կազմակերպությունն ի զորու չեղավ իր առանձին անդամներին հեռու պահել նոր հովերի ու գաղափարների ազդեցությունից: Սկզբում այդ գործիչները քողարկված և զուսպ ոճով, իսկ հետագայում ավելի պարզորոշ ու անկաշկանդ արձագանքեցին եվրոպական հեղափոխական, ազգային-ազատագրական շարժումներին:

Վիեննայի Մխիթարյաններից Ղևոնդ վարդապետ Հովնանյանը Իռլանդիայի վիճակը համարում է «շատ գէշ», քանզի այդ «խեղճ կղզին» անգլո-իռլանդական ունիայի կնքումից տասնամյակներ անց տակավին գտնվում է XIX դարասկզբի վիճակում: Այստեղ «աղքատությունն ու խեղճությունը օրեցօր սաստկանում են», վարձակալները չեն կարողանում ագարակատերերին վարձ վճարել և հարկադրված ընտանիքներով գաղթում են: Ամեն տեղ խռովություններ եղան, աղքատները միանալով ընկերություններ կազմեցին, գնալով «մեծ դաւակցութիւն մը կազմուեցաւ», իսկ կառավարությունը «սաստիկ միջոցներ սկսաւ բանեցնել»: Երկրում սաստիկ սով սկսվեց, մեծ թվով մարդիկ մահացան, և խորհրդարանը, «խեղճ Իրլանտացւոց վրայ գթալով, որոշեց իրենց 200 հազար ստեռլինգ օգնութիւն ըլլայ»:

[1] «Եվրոպա», 1850, 20 օգոստոսի, թիվ 34, էջ 134:
[2] «Ազգասեր», 1848, 15 հունվարի, թիվ 127, էջ 23:
[3] «Ազգասեր», 1848, 28 մարտի, թիվ 139, էջ 119:
[4] Հ. Գրիգորիս վ. Գալէմքերեան, նշվ. աշխ., էջ 99:
[5] «Եվրոպա» 1848, 27 հունիսի, թիվ 26, էջ 112:
[6] Հ. Գրիգորիս վ. Գալէմքէրեան, նշվ. աշխ., էջ 100:

Բայց սա, եզրակագնում է Ղ. վրդ. Հովնանյանը, «միայն անցողական օգնութիւն էր, չարեաց դարման տանելու վրայ ոչ ոք կը մտածէր»[1]:

«Եվրոպայի» դիտարկմամբ Իռլանդիայում զանգվածային սովի պատճառով աղքատ մարդիկ «մեծ անհանգստութեան» մեջ են, որ «ապագային համար աղէկ նշան չէ»: Այս երկրում տիրող սովը նորից «թշվառութիւնը աւելցընելու պիտ որ սկսի», որից իշխանությունները շատ անհանգստացած են[2]: Վիեննայի Մխիթարյանների համոզմամբ իռլանդացիների թշվառության պատճառը ոչ միայն սոցիալական ու տնտեսական, այլ զգալի չափով քաղաքական է: «Եվրոպայի» կարծիքով իռլանդացիները 46 տարի շարունակ ընդդիմացել են անգլո-իռլանդական ունիային, «կուզէն նորէն աս միութիւնը քակել», այդ պատճառով Իռլանդացի «երևելի ու հռչակավոր պատգամավոր» Դ. Օ'Կոննելլը «Ռիփիլ» ընկերություն հիմնեց[3]:

Ղ. վրդ. Հովնանյանի գնահատմամբ Դենիել Օ'Կոննելլը «մեծ գործունեութիւն սկսաւ», որպեսզի «օրինաւոր միջոցներով Իրլանտայի իրաւունքները ձեռք բերի»: Նա իր հայրենակիցներին համոզեց հանդարտություն պահպանել, գործել միայն օրենքների շրջանակներում, որպեսզի այնքան «բարոյական զօրութիւն ստանան», որ հնարավոր լինի «տևական կերպով աղէկցընելու համար»[4]: Որպես անգլիական խորհրդարանի պատգամավոր՝ Դ. Օ'Կոննելլը, «իր հայրենեաց շահը առաջ տանելու փոյթ ընելեն զատ, ամէն կարելի միջոցներով կը ջանար նոյն նպատակին հասնիլ»: Ղ. վրդ. Հովնանյանը Դ. Օ'Կոննելլի մեծագույն նպատակը համարում է Անգլիան և Իռլանդիան «միացնող օրինագիրը ետ առնելը» ու առանձին իռլանդական խորհրդարան ունենալը: Դրան հասնելու համար նա «անկարելի գործողութեան ձեռք զարկաւ», դատարանի առաջ կանգնեց, շատ նեղություններ կրեց, առողջությունը կորցրեց և Իտալիայում «իր բազմաշխատ կեանքը կնքեց»[5]:

«Եվրոպայի» հավաստի պատմելով՝ 1847 թ. մայիսի 25-ին՝ ծանր հիվանդությունից հետո, Ձենովայում իր մահկանացուն կնքած Իռլանդիայի «ազատիչի մահուան գոյժը» նույն օրը Դուբլին հասավ: Առավոտյան քաղաքի և արվարձանների եկեղեցիների զանգերը հնչեցին, աղոթքներ եղան, իսկ «Ռիփիլ» ընկերությունը մայիսի 26-ին նրա հիշատակին նվիրված ժողով հրավիրեց ու հայտարարություն տարածեց[6]: Նրա աճյունը օգոստոսի 2-ին հասավ Քինգսթաունի նավահանգիստ, իսկ օգոստոսի 5-ին Դուբլինում «մեծ հանդիսությամբ», որին մասնակցում էր 50 հազար մարդ, հուղարկավորվեց Կլեսնիվինի եկեղեցու գավթում[7]:

«Եվրոպան» իռլանդացիների թշվառության, աղքատության և սովի պատճառները որքան էլ կապում է 1840-ական թթ. կարտոֆիլի հիվանդության և արդյունաբերական ճգնաժամի հետ, այնուհանդերձ չի անտեսում նաև քաղաքական գործոնը: Թերթն իրավացիորեն նկատում է, որ «երևելի և հռչակավոր պատգամավոր» Դ. Օ'Կոննելլի հիմնադրած «Ռիփիլ» ընկերությունը, դեմ լինելով Անգլիայի և Իռլանդիայի դաշինքին, ցանկանում էր այդ «միությունը քակել»[8]: Դա առաջ բերեց անգլիական իշխանությունների դժգոհությունը, որոնց քաղաքականության հետևանքով ծանր կացություն էր ստեղծվել: Իռլանդիայում չարագործություններն օրեցօր ավելանում էին, կառավարությունն այնտեղ գտնվող զորքի թիվը 28 հազարից կարող էր հասցնել 50 հազարի: Ըստ «Եվրոպայի»՝ զինվորների այդպիսի «բազմութիւնն ալ բաւական չէ չարիքներուն ու սպանութիւններուն առջևը առնելու», որովհետև թշվառությունը գնալով մեծանալու է[9]:

«Եվրոպան» իռլանդացիների համար թշվառություն է համարում նաև 1847 թ. դեկտեմբերի 21-ին Լորդերի պալատում Իռլանդիայում տեղի ունեցող «ոճիրները բռնութեամբ նուաճելու առաջարկություն ընդունելը»[10], որից հետևում է, որ «Իրլանտայի մէջ հարուստներուն ուրիշ և աղքատներուն ուրիշ օրէնք կայ»: Ինչպես թերթն է նշում,

---

[1] Հ. Ղևոնդ վ. Հովնանեան, Պատմութիւն քաղաքակրթութեան եւրոպական տերութեանց ընդհանրապես, հ. Դ, երրորդ շրջան, երկրորդ մաս, Վիեննա, 1860, էջ 42-43:

[2] «Եվրոպա», 1847, 28 սեպտեմբերի, թիվ 14, էջ 54, 7 դեկտեմբերի, թիվ 24, էջ 94:

[3] «Եվրոպա», 1847, 29 հունիսի, թիվ 1, էջ 2-3:

[4] Հ. Ղևոնդ վ. Հովնանեան. նշվ. աշխ., հ. Դ, էջ 43:

[5] Նույն տեղում, էջ 185-186:

[6] «Եվրոպա», 1847, 29 հունիսի, թիվ 1, էջ 2-3:

[7] Տե՛ս «Եվրոպա», 1847, 17 օգոստոսի, թիվ 8, էջ1, 24 օգոստոսի, թիվ 9, էջ 34:

[8] «Եվրոպա», 1849, 29 հունիսի, թիվ 1, էջ 2:

[9] «Եվրոպա», 1847, 7 դեկտեմբերի, թիվ 24, էջ 94:

[10] «Եվրոպա», 1848, 4 հունվարի, թիվ 1, էջ 2:

«մարդկային կեանքը պահպանելը կառաւարութեան սուրբ ու գլխաւոր պարտքն է»[1], մինչդեռ կառավարությունը զբաղված է իռլանդացիների ունեցած զենքը հավաքելով, որի պատճառով ժողովուրդը վրդովման մեջ է: «Աս դժբախտ երկրին մէջ դատաստանարանները միշտ զբաղած են»[2], ուղղափառ եկեղեցականները իռլանդացի գյուղացիներին «իրենց երկրի տերերի դէմ կը գրգռեն ու բռնութիւներ ընել կուտան»[3]:

Մարտի 6-ին Գլազգոյում չարտիստները «մեծ խռովություն» բարձրացրին, որը «երկյուղալի է», իսկ Ռիփիլի ընկերությունը կոչ է արել մարտի 17-ին յուրաքանչյուր համայնքում ժողով հրավիրել ու պահանջել Իռլանդիային թույլ տալ առանձին խորհրդարան ունենալ[4]: Իռլանդիայի իրադարձություններին ուշադրությամբ հետևող «Եվրոպան» այն կարծիքին էր, որ իռլանդացիների պայքարի նպատակը Անգլիայի հետ դաշինքի խզումն էր և ինքնուրույն խորհրդարան ունենալը:

Իռլանդական ազգային շարժումը պարբերաբար լուսաբանող «Եվրոպան» պատմում է, որ «Միացյալ իռլանդացի» («United Irishman») թերթում Ձոն Միթչելը գյուղացիությանն ապստամբության կոչեր էր անում, Դուբլինում ժողովուրդը զինվել էր, ամենուրեք մարդկանց ըմբոստության գրգռելու բովանդակությամբ թռուցիկներ էին տարածվում: Թերթը 1848 թ. մարտի 15-ին Բիրմինգհեմում և Լիվերպուլում կայացած հանրահավաքների առնչությամբ ենթադրում էր, որ Իռլանդիայում «հայտնի ապստամբություն» է սպասվում: Մխիթարյանների հավաստի տվյալներով ժողովրդին ապստամբության մղողը «Երիտասարդ Իռլանդիա» կազմակերպության համախոհներն էին, որոնց ղեկավարներից մեկը Ու. Օ'Բրայենն էր: Նրանք ցանկանում էին «զենքի զորությամբ» Անգլիայի դեմ դուրս գալ և իրենց առանձին խորհրդարանը հաստատել: Նրանցից տարբերվում էր Ռիփիլի ընկերությունը, որն իր «հռչակավոր» ղեկավար Դ. Օ' Կոննելլի գլխավորությամբ «միայն բարոյական զորությամբ ու պատճառով բանը առաջ տանիլ կուզե»: Ռիփիլականները՝ նրա տղայի՝ Ձոն Օ'Կոննելլի և այլոց ղեկավարությամբ, Իռլանդիայի խորհրդարանն Անգլիայի խորհրդարանից անջատելու համար «ամեն կերպով ջանան, բայց խաղաղութեամբ ու հանդարտութեամբ, որպեսզի իրլանդացւոց թշնամիներուն պատճառ չտան»[5]:

Վենետիկի Մխիթարյանների «Բազմավեպի» կարծիքով Անգլիան 1848 թ. «համաշխարհական խռովութեան և յեղափոխութեան ատեն ամենևին այլայլութիւն չկրեց» և խուսափեց այդ «քաղաքական երկրաշարժից» շնորհիվ ժողովրդի բարքի ու վիճակի, ինչպես նաև «պետութեան կառավարութեան կերպի»[6]: Պարբերականի դիտարկմամբ 1848 թ. իռլանդական ազգային շարժման, անգլիացիների ու իռլանդացիների ատելության պատճառները շատերի կարծիքով քաղաքական և կրոնական էին: Ի թիվս դրանց՝ «Բազմավեպը» հավելում էր նաև երկու ժողովուրդների բնավորությունը՝ անգլիացիների «անձնաշահասէր զգացումը և իրլանտացւոց տկար և անաշխատասէր բնութիւնը»: Ներքին քաղաքական խնդիրների թվում «Բազմավեպը» կարևորում էր իռլանդացիների հողազրկությունը, կարտոֆիլի հիվանդությունը, ահավոր սովը, զանգվածային արտագաղթը, աղքատությունն ու թշվառությունը[7]:

Վենետիկի Մխիթարյանները հասկանում էին, որ իռլանդացիները ցանկանում են անջատվել բրիտանական կայսրությունից, քանզի «Անգղիական լծոյն աւելի ճնշումը» օրեցօր վատթարացնում է նրանց վիճակը: Բայց «փոխանակ համոզեցուցիչ և դիւրին պատճառաց և միջոցներ փնտրելու և ոտն առ ոտն դիմելու յազատութիւն, անդեն մեկ օրուան մէջ կուզեն իսպառ թօթափել անգղիական լուծը և բնաւին ինքնիշխան երկիր ձևանալ»[8]: Իռլանդացիների համար ազատության խնդրի լուծումը «Բազմավեպը» համարում էր դժվարին գործ, քանզի «նոր ազատարարք գոնեայ ունենային Դ. Օ'Քոննելի հանճարը և ոգին, որ իրենց առաջնորդ կհամարէին»: Պարբերականը Դ. Օ'Կոննելլի նպատակը համարում էր «սրբազան և օրինավոր» և ափսոսանք հայտնում, որ նա «բաղտ չունեցավ» իր կյանքի ընթացքում տեսնել երազած ազատությունը[9]: «Բազմավեպն» Իռլանդիայի համար մեծ կորուստ էր համարում Դ. Օ'Կոննելլի մահը: «Երիտասարդ

[1] «Եվրոպա», 1848, 18 հունվարի, թիվ 3, էջ 18:
[2] «Եվրոպա», 1848, 8 փետրվարի, թիվ 6, էջ 23:
[3] «Եվրոպա», 1848, 7 մարտի, թիվ 10, էջ 42:
[4] «Եվրոպա», 1848, 21 մարտի, թիվ 12, էջ 50:
[5] «Եվրոպա», 1848, 28 մարտի, թիվ 13, էջ 56:
[6] «Բազմավեպ», 1852, 15 հունիսի, թիվ 12, էջ 185:
[7] «Բազմավեպ», 1882, հ. 40, պր. Ա-Դ, էջ 183-186:
[8] Նույն տեղում, էջ 186:
[9] Նույն տեղում:

Իռլանդիա» կազմակերպությունը, «Ազգ» թերթը իռլանդական «խնդիրը բորբոքեցին» և գլխավորեցին «հայրենաց բողոքը», որի նպատակը ոչ թե Դ. Օ'Կոննելլի «ուղղափառութիւնն էր, այլ հայրենաց ազատութիւնն»[1]: Ըստ «Բազմավեպի»՝ Դ. Օ'Կոննելլի մահից հետո իռլանդական ազգային շարժումը գլխավորեցին Ուիլյամ Սմիթ Բրայենը, Թոմաս Ֆրենսիս Միգերը, Չարլզ Դաֆֆին. բոլորն էլ երիտասարդ գործիչներ էին: Նրանցից Ու. Օ' Բրայենին «Բազմավեպը» համարում էր Իռլանդիայի «հայրենյաց բողոքոյն գլուխ»[2]:

Իռլանդական հայրենասիրական շարժման ղեկավարները 1848 թ. փետրվարի ֆրանսիական հեղափոխության հաղթանակից հետո մի պատվիրակություն ուղարկեցին Փարիզ՝ օգնություն ստանալու ակնկալիքով: Սակայն արտաքին գործերի նախարար Ալֆոնս դե Լամարթինը (1790-1869) «աննշան խօսքով զանոնց մխիթարեց և ճամբեց»[3]: Իրականում Ֆրանսիայում հանրապետություն հռչակվելու լուրից ոգևորված երիտասարդ իռլանդացիները, նույնիսկ Համադաշնության աջ թևի ներկայացուցիչները կոչ արեցին նախապատրաստվել զինված ապստամբության: Ջոն Միթչելը բացահայտ քարոզչություն էր անում Իռլանդիան անկախ հանրապետություն հռչակելու օգտին՝ «չափազանց լայն ժողովրդական հենքի վրա»: Նա գտնում էր, որ Իռլանդիան կարող է անկախություն նվաճել միայն զինված ապստամբության ճանապարհով: «Ազգ» և «Միացյալ իռլանդիացի» թերթերում նույնիսկ մրցակցություն ծավալվեց զինված ապստամբության կոչերի հարցում:

Հանրապետական Ֆրանսիային շնորհավորելու և աջակցություն ստանալու ակնկալիքով Փարիզ մեկնած Ու. Օ'Բրայենի, Թ. Միգերի և արհեստավոր Հոլլիվուդի պատվիրակությունը հայրենիք վերադարձավ ձեռնունայն: Միակ արդյունքը, թերևս, իռլանդական կանաչ, սպիտակ, նարնջագույն եռագույն դրոշն էր, որը նմանակում էր ֆրանսիական ազգային եռագույնին: Թ. Միգերի նկարի հիման վրա պատրաստված եռագույնը սկզբում տեղադրվեց Ուոթերֆորդում, ապա ներկայացվեց Դուբլինի հանրահավաքում՝ առաջ բերելով հսկայական ոգևորություն[4]: Փարիզում մերժում ստանալուց հետո Ջ. Միթչելն ու նրա համախոհները հանդես եկան հույսներն իրենց և ոչ թե 50 հազար ֆրանսիացի կամավորների վրա դնելու հայտարարությամբ:

Չարտիստական շարժման վերելքի պայմաններում Իռլանդիայում շարունակվում էր ժողովրդի զանգվածային զինումը, չէին դադարում գյուղացիական ելույթները, ամենուրեք կազմակերպվում էին ազգային պահապան ջոկատներ: «Եվրոպան» և «Հայաստանը» պատմում են 1848 թ. ապրիլի 10-ին Քեննինգթոն-Քոմմոնում կայանալիք զանգվածային ցույցի կապակցությամբ կառավարության ձեռնարկած նախապատրաստությունների, ցույցի ճախողման և համայնքների պալատին չարտիստների հանձնած երրորդ հանրագրի մասին[5]: Ըստ «Արշալույս Արարատյանի»՝ չարտիստների ընկերության «խռովահույզ փորձը չհաջողվեց»: Լոնդոնի Քեննինգթոն-Քոմմոն հրապարակում ծրագրված 300 հազար մարդկանց մասնակցությամբ մեծ հանրահավաքը տեղի չունեցավ, որից Լոնդոնի հանգստությունը և բարեկարգությունն ամենևին չտուժեց: Այժմ կառավարությունը կենտրոնացել է Իռլանդիայի կացության վրա, որտեղ «մեծ անկարգութիւններ կպատահին. Իռլան-տացիք սկսան չարաչար ի գործածել իրենց տուած քաղաքական իրավունքները և արտօնութիւնները, ատենաբաներէն ոմանք զանազան ժողովներու մէջ գրեթե յայտնապէս ապստամբութեան կըգրգռեն զժողովուրդը թէ՛ խոսքով և թէ՛ հրապարակական գրուածքով»[6]:

Չարտիստական շարժման վերելքի պայմաններում Ջ. Միթչելը Դրոգեդում կայացած հանրահավաքում ժողովրդին կոչ էր անում ֆրանսիացների օրինակով ոտքի ելնել: Նրա պլանը նախատեսում էր ապստամբություն սկսել Դուբլինում, գրավել այն, որից հետո նաև մյուս քաղաքները և ոտքի հանել գյուղացիությանը: «Միացյալ իռլանդացի» թերթի էջերում նա խնդիր էր դնում համախմբելու իռլանդացիների և չարտիստների՝ ֆիզիկական ուժի կողմնակիցների ջանքերը[7]:

Հայ պարբերականներն արդարացիորեն ընդգծում են իռլանդացիների շարքերի պառակտումը և այդ կապակցությամբ վկայակոչում 1848 թ. մայիսին Լիմրիքում տեղի

---

[1] Նույն տեղում:

[2] Նույն տեղում, էջ 187:

[3] «Բազմավեպ», 1882, հ. 40, պր. Ա-Դ, էջ 187:

[4] Джексон Т. А., указ. соч., стр. 219-220; История Ирландии, с. 200; Революции 1848-1849, том II, стр. 305.

[5] «Եվրոպա», 1848, 25 ապրիլի, թիվ 17, էջ 71, «Հայաստան», 1848, 1 մայիսի:

[6] «Արշալույս Արարատյան» , 1848, 30 ապրիլի, թիվ 310:

[7] Революции 1848-1849, том II, стр. 305-307; Т.А. Джексон, указ. соч., стр. 219-220; Мортон А., История Англии. Пер. с англ., М., 1950, с. 380.

ունեցած միջադեպը «Հին» և «Երիտասարդ Իռլանդիայի» կողմնակիցների միջև: «Եվրոպայի» պատմելով՝ իռլանդական խորհրդարան ունենալու հարցում նրանց միջև «սաստիկ և արյունահեղ» կռիվ տեղի ունեցավ, որը «երկրին շատ մեծ վնաս տվեց»[1]: Ըստ «Հայաստանի»՝ Դ. Օ'Կոննելլի կողմնակիցները հանդիպման ժամանակ բանավեճ սկսեցին Ու. Օ'Բրայենի, Ջ.Միթչելի, Թ. Միգերի հետ, որը վերածվեց իսկական կռվի: Թերթի պատմելով՝ այդ կռվում ամենից շատ տուժեց Ու. Օ'Բրայենը, որը մարմնական լուրջ վնասվածքներ ստացավ ու հազիվ փրկվեց բազմության հաշվեհարդարից: Թերթը կարծիք էր հայտնում, որ այս կռվից հետո իռլանդական խռովարարները գուցե հանդարտվեն: Անգլիական լրագրերը գրում էին, որ այդ միջադեպից հետո Ու. Օ'Բրայենը քաղաքական գործերից մեկուսացել և փակվել էր իր տանը, Թ. Միգերը լքել էր իր կուսակիցներին, իսկ Ջ. Միթչելը նախկին համարձակությամբ այլևս հոդվածներ չէր գրում: Անցանկալի միջադեպի պատճառը «Հայաստանի» կարծիքով եղել է այն, որ Դ. Օ'Կոննելլի կողմնակիցները Ջ. Միթչելին ու Թ. Միգերին «հասկացնել ուզեր են բռնութեան ճամբուն գէշ ըլլալը»[2]: Թերթն իրավացի էր այնքանով, որ Ջոն Միթչելը պատրաստ էր համագործակցել բոլորի՝ չարտիստների, յակոբինականների, ծայրահեղ հանրապետականների և նույնիսկ սոցիալիստների հետ, որոնք իրեն կօգնեին պայքարել անգլիական իշխանությունների դեմ: 1848 թ. գարնանը նա հայտարարեց, որ Իռլանդիայի անկախությանը կարելի է հասնել միայն զինված ապստամբության միջոցով, հեղափոխությունը հասունացել է, և կոչ արեց զինել ժողովրդին: Նույն կարծիքին էր նաև Թ. Միգերը[3]: Իռլանդական շարժումը կանխելու նպատակով անգլիական իշխանությունները հապճեպ նոր օրենք ընդունեցին, որը, ըստ «Արշալույս Արարատյանի», պետք է «ի գործ դրվի խռովարար անձանց դէմ՝ անոնց ապստամբական գրգիռները ըստ արժանւոյն պատժելու և զսպելու համար»[4]:

«Եվրոպայի» կարծիքով «պատերազմական այս օրենքը» կառավարությունն ընդունեց Լիմրիք քաղաքը «խռովական վիճակի մէջ գտնուելուն համար»[5]: Իրականում օրենքի ընդունումը պայմանավորված էր Համադաշնության կողմնակիցների և չարտիստների միջև եղբայրացմամբ: Մեկ օրվա մեջ ընդունված օրենքով «խռովության» և «դավաճանության» դեպքերն այլևս չէին դիտվում որպես «դատականորեն պատժելի արարք» և համարվում էին «քրեական հանցագործություն»: Նոր օրենքով «քաղաքական» և «քրեական» հանցագործների միջև եղած տարբերությունները վերացվում էին[6]: Այդ օրենքի հիման վրա անգլիական իշխանությունները 1848 թ. մայիսի 12-ին Ջ. Միթչելին ձերբակալեցին: Իռլանդիայի մի քանի քաղաքներից զինված ջոկատներ եկան Դուբլին՝ փորձելով ազատել Ջ. Միթչելին և ապստամբություն բարձրացնել, բայց իշխանությունները մայիսի 27-ի առավոտյան 10 հազար զորք մտցրին Դուբլին և կանխեցին ապստամբությունը: Ջ. Միթչելը՝ որպես «պետական դավաճան», դատապարտվեց 14 տարվա աքսորի[7]:

Այս ամենին քաջատեղյակ «Եվրոպան» հայտնում էր, որ թագավորական իշխանության դեմ ըմբոստանալու, Իռլանդիայում հանրապետություն հաստատելու «հորդորած ու գրգռած լինելու պատճառաբանութեամբ» Ջ. Միթչելը ձերբակալվեց և բանտարկվեց Նյուգեդում: Դատարանը նրան մեղավոր ճանաչեց և դատապարտեց 14 տարվա աքսորի: Այս դատավճիռը Դուբլինում մեծ ազդեցություն ունեցավ, «բայց խաղաղությունը չվրդովեցավ»[8]: «Արշալույս Արարատյանը», անդրադառնալով «երևելի խռովարար» Ջ. Միթչելին Սփիք կղզի աքսորելուն, նշում էր. «Այս մարդը իր գրգռիչ և անզգուշավոր գրուածքներով գրեթե ապստամբութեան կիրավիրեր զիռլանդացիները Անգղիոյ թագուհիին և անոր կառավարութեանը դեմ»[9]: Ըստ «Հայաստանի»՝ Ջ. Միթչելի ձերբակալության կապակցությամբ նրա կուսակիցները «ամենևին բողոք չարեցին»: Թերթը հանգամանորեն պատմում էր Ջ. Միթչելի դատավարության ընթացքի, նրան Բերմուդյան կղզիներ աքսորելու և «Յունայթեդ այրիշման» թերթը փակելու մասին[10]:

---

[1] «Եվրոպա», 1848, 16 մայիսի, թիվ 20, էջ 86, 23 մայիսի, թիվ 21, էջ 91:

[2] «Հայաստան» 1848, 22 մայիսի:

[3] Джексон Т. А., указ. соч., стр. 216,220-221; История Ирландии, с. 199; Революции 1848-1849, том II, стр. 305.

[4] «Արշալույս Արարատյան», 1848, 30 ապրիլի, թիվ 310:

[5] «Եվրոպա», 1848, 16 մայիսի, թիվ 20, էջ 86:

[6] Джексон Т. А., указ. соч., стр. 220.

[7] История Ирландии, стр. 203-204; Революции 1848-1849, том II, стр. 308; Джексон Т. А., указ. соч., стр. 221.

[8] «Եվրոպա», 1848, 6 հունիսի, թիվ 23, էջ 100, 13 հունիսի, թիվ 24, էջ 103:

[9] «Արշալույս Արարատյան», 1848, 11 հունիսի, թիվ 313:

[10] «Հայաստան» 1848, 5 հունիսի:

Ձ. Միթչելի դատավճռի հրապարակման օրերին՝ մայիսի 28-29-ին, Դուբլինում ցաքուցրիվ փորձեր արվեցին ապստամբություն բարձրացնելու, բայց զորքն ու ոստիկանությունը դրանք ճնշեցին: Անհաջողության մատնվեց նաև մայիսի 29-ին Լոնդոնում ապստամբելու չարտիստների փորձը: Իշխանությունները հրաման արձակեցին իռլանդական Համադաշնության 118 անդամների ձերբակալման մասին: Համադաշնության խորհուրդը որոշեց ապստամբություն բարձրացնել, որի կենտրոն ընտրվեց Կիլկեննին: Իռլանդիայի հարավային մի շարք քաղաքներում անջատ-անջատ ապստամբություններ բռնկվեցին, Ուեկսֆորդում և Լիմերիքում զորքերի հետ ընդհարումներ տեղի ունեցան, բայց միասնական ապստամբություն չկայացավ[1]:

«Հայաստանը» գրում էր, որ Իռլանդիայի հարավային մասում ապստամբելու փորձեր էին արվում, շատերը զինվում էին և համալրում ազգային պահապան զորքը: Թերթը չափազանցություն էր համարում Իռլանդիայում 200 հազար զինված մարդ լինելու լուրերը: Եթե իռլանդացիները, իրոք, այդքան զինված մարդ ունեին, ապա ինչո՞ւ ոտքի չէին ելնում ու չէին պաշտպանում իրենց ղեկավարներից Ու. Օ'Բրայենին, որին իշխանությունները ցանկանում էին ձերբակալել: Ըստ թերթի՝ Ու. Օ'Բրայենը սկզբում քաջալերում էր զենք վերցրած իր հայրենակիցներին, բայց այն բանից հետո, երբ իշխանությունները նրան «խռովարար և հայրենյաց մատնիչ» անվանեցին ու հրաման արձակեցին ձերբակալելու մասին, նա տեղի տվեց: Ու. Օ'Բրայենից բացի՝ եկեղեցականները և Ձոն Օ'Կոննելլը նույնպես աշխատում էին, որ «ապստամբությունը չբորբոքվի և շատ կուսակից ունենան» [2] : «Հայաստանի» տեղեկությունը հավաստի է: Մինչ նոր օրենքի ընդունումը Ու. Օ'Բրայենը և Թ. Միգերը դատարանի առաջ կանգնեցին, բայց երդվյալ ատենակալները հրաժարվեցին նրանց դատապարտելուց: Ձ. Միթչելին դատապարտելուց հետո Ու. Օ'Բրայենը համոզեց Թ. Միգերին հրաժարվել նոր բռնի գործողություններ իրականացնելու մտադրությունից[3]:

«Եվրոպան» շարժման անկման հարցում նույնպես կարևորում էր եկեղեցականների դերը և նշում, որ Իռլանդիայում «ամեն տեղ ուղղափառ քահանաները ապստամբության հակառակ կելլեն ու ժողովուրդը համոզելու ու հանդարտեցնելու կջանան»[4]: Իսկապես, շարժման սկզբում Ռեփիլական ընկերությանը սատարող բարձրագույն կաթոլիկ հոգևորականությունը քարոզչություն իրականացրեց զինված ապստամբությունը դադարեցնելու համար՝ դրանով ազդելով գյուղացիության կրոնական տրամադրությունների վրա[5]:

«Արշալույս Արարատյանի» լրատվությամբ Իռլանդիայում թեպետ «հայտնի խռովութիւն չծագեցավ, այնուամենայնիվ գաղտնի խմորում և գրգռութիւն կա կառավարութեան դեմ»: Քաղաքական առանձին գործիչներ վախենում էին, որ այդ վիճակը կարող էր հանգեցնել «վտանգավոր աղմուկի», բայց կառավարությունը բնավ անհանգստացած չէր և «ազդու միջոցներ» էր ձեռնարկել դրա դեմ: Իռլանդիայի կառավարիչ լորդ Կլարենդոն, երկրի «խռովահույզ և սպառնագին կացութիւնը տեսնելով», Դուբլինը պաշարողական վիճակի մեջ հայտարարեց: Իռլանդիայում գտնվող կառավարական 45-հազարանոց զորքը, ըստ թերթի, լիովին բավարար էր ապստամբությունը ճնշելու համար, մանավանդ որ օգնական զորքով նավատորմը հասել էր Կորկ նավահանգիստ[6]:

Ըստ «Եվրոպայի»՝ անգլիական կառավարությունը որոշեց Իռլանդիայի «խաղաղութիւնն ու հանդարտութիւնը արտաքոյ կարգի բռնական միջոցներով հաստատել»[7]: Կառավարական մեծաթիվ զորքը Կարրիկում և Ուեկսֆորդում ապստամբությունը ճնշեցին[8], որի մասին հավաստի տեղեկություն է տալիս «Արշալույս Արարատյանը»: Ըստ թերթի՝ Ու. Օ'Բրայեն «խռովահույզ անձին առաջնորդութեամբ» սկսված ապստամբությունն անմիջապես ցրվեց, որը իռլանդական կաթոլիկ քահանաները չէին խրախուսում: Նրանք բոլորն էլ «կառավարութեան կուսակից են և կդատապարտեն այս հիմարական ապստամբութիւնը, որուն նպատակը հասարակականութիւն (քոմյունիզմ) և ընկերական կարգադրութեանց կործանումն է: Ուստի Իռլանդիայի բարեմիտ և խաղաղասեր անձինքը շատ գոհ են կառավարութեան ի գործ դրած ազդու և զորավոր միջոցներեն, որով առայժմ հանդարտութիւնը

[1] Революции 1848-1849, том II, стр. 308-309; История Ирландии, стр. 204-205.
[2] «Հայաստան» 1848, 14 օգոստոսի:
[3] Джексон Т. А., указ. соч., стр. 221.
[4] «Եվրոպա», 1848, 1 օգոստոսի, թիվ 31, էջ 134; 15 օգոստոսի, թիվ 33, էջ 142:
[5] Տե՛ս История Ирландии, стр. 206:
[6] «Արշալույս Արարատյան», 1848, 23 հուլիսի, թիվ 316; 6 օգոստոսի, թիվ 317:
[7] «Եվրոպա», 1848, 8 օգոստոսի, թիվ 32, էջ 137:
[8] История Ирландии, стр. 205; Революции 1848-1849, том II, стр. 311.

ամեն տեղ կտիրե և երկյուղ չկա նոր ապստամբութիւն ծագելու»[1]: Թերթն իրավացի է այն հարցում, որ Իռլանդիայում բոլորը չէին ձգտում ապստամբական ճանապարհով ինքնավարություն ստանալ: Իռլանդական հասարակության վերնախավը, որին թերթն անվանում է «բարեմիտ ու խաղաղասեր», դեմ էր ազգային-ազատագրական պայքարին:

«Արշալույս Արարատյանն» այնուհետև հույս էր հայտնում, թե Անգլիայի կառավարությունը «հոգ կտանի, որպեսզի հարկավոր եղած մարդասիրական միջոցները ի գործ դնե այս ժողովրդի դժբաղդ վիճակը լավացնելու համար» [2]: Այստեղ կրկին դրսևորվում է «Արշալույս Արարատյանի» դիրքորոշման երկփեղկվածությունը: Թերթը, մի կողմից, հայտնում է, որ «կառավարության ազդու և խոհեմ ընթացքովը» ապստամբությունը ճնշվեց, մյուս կողմից՝ փաստում իռլանդական ժողովրդի «դժբախտ վիճակը»:

Պոլսահայ «Բանասերը», որի խմբագիր Հովհաննես Հիսարյանը (1827-1916) կարողանում էր «բազմակողմանի և հետաքրքրական նյութեր գտնե»լ[3], անդրադառնալով ապստամբության վախճանին՝ նշում էր դրա տնտեսական կարևորությունը անգլիական կառավարության համար: Այս մասին նա գրել է. «Անգղիան և Իռլանտան քիչ մը ատեն անօգուտ ու աննշան շփոթություններե ետև, ավելի հաստատուն կացութիւն ստացավ Մեծին Բրիտանիոյ կառավարութիւնը, որն որ ուրիշ երկիրներու խռովութիւններեն իր վաճառականությունն ու արուեստիցը մեծ շահ ու առաջադիմություն ստացնել տուավ»[4]:

Իռլանդական ազգային-ազատագրական պայքարի ավարտը հավաստող «Ազգասեր Արարատյանը» հեգնում էր ապստամբության վախճանը: Թերթը գրել է, որ իռլանդական ապստամբությունը «վերջապէս նկուն եղեալ դադարեցավ ծաղրալի օրինակաւ լերին՝ որ ծնավ զմուկն չնչին»: Թերթը ներկայացնում էր Ու. Օ'Բրայենի գլխավորությամբ սկսված ապստամբության ընթացքը և կշտամբում ապստամբներին երկչոտության ու զորքի առաջ փախչելու համար: Մ. Թաղիադյանը հանդիմանում էր Ու. Օ' Բրայենին «առաջին հանդիսանայր ի փախուստ աճապարել, թեև իսկոյն ձերբակալեալ եղեալ»: Ապստամբության մասին Մ. Թաղիադյանը եզրակացրել է. «Այս օրինակ կատարեցավ ապստամբութիւնն՝ սկսեալ ի խենթից, յառաջ վարեալ ի խելագարոց և առաթուր կոխեալ է սաստիկ արհամարհանաց»[5]: Իրականում Տիպպերերում Ու. Օ'Բրայենի կոչով հավաքված մի քանի հարյուր թույլ զինված մարդիկ փորձեցին շրջապատել ոստիկանության զինված ջոկատը, բայց երբ ապստամբներից երկուսն սպանվեցին, նա մյուսներին կոչ արեց ցրվել: Ու. Օ'Բրայենը և Թ. Միգերը ձերբակալվեցին ու դատապարտվեցին երկարատև աքսորի[6]:

«Եվրոպան» և «Հայաստանը» պատմում են սեպտեմբերի կեսերին Կիլկենում ապստամբության փորձ անելու մասին: Ըստ «Եվրոպայի»՝ շուրջ չորս հազար զինված իռլանդացիներ ոտքի ելան Պորտլենդում և Տիպպերերի կոմսությունում, իսկ Ուոթֆորդում ապստամբեցին 6-12 հազար մարդ, զինված ապստամբություններ տեղի ունեցան նաև Կլոնմելի և Պորտլոյի տարածքում[7]: «Հայաստանի» պատմելով՝ Տիպպերերի, Ուոթֆորդի և Կիլկենի կոմսություններում ժողովրդի «այս անգամ ոտք ելլելը մի քիչ ծանրկեկ բան է, և ասոնք զսպելը երկար պիտի քշե, թե որ անակնկալ դիպված կամ մանավանդ ինկլիզի խոհեմ կառավարությունը որ ասանկ շատ խռովություններու առաջ առած է առանց արյունահեղության, ասոր ալ առաջը չառնե»[8]:

Սակայն իռլանդական այս ապստամբությունն էլ անկազմակերպ դուրս եկավ և հեշտությամբ ճնշվեց իշխանությունների կողմից: Այն «անփառունակ մարեց», որովհետև առաջին իսկ փոքր ընդհարումից հետո Ու. Օ'Բրայենն իր ջոկատին հրամայեց ցրվել: Նա ընդունակ չէր ապստամբություն ղեկավարելու և նրա հետևանքներից վախենում էր գրեթե այնքան, որքան անգլիական կառավարությունը[9]:

«Եվրոպան» և «Արշալույս Արարատյանը» մանրամասն պատմում էին Ու. Օ'Բրայենի ձերբակալության և դատավարության ընթացքի մասին: Երկու պարբերականն էլ թեպետ համակրանք չէին տածում իռլանդական ազգային պայքարի և Ու. Օ'Բրայենի անձի

---

[1] «Արշալույս Արարատյան», 1848, 20 օգոստոսի, թիվ 318:
[2] Նույն տեղում, 1848, 3 սեպտեմբերի, թիվ 319:
[3] Հ. Գրիգորիս վ. Գալէմքէարեան, նշվ. աշխ., էջ 124.
[4] «Բանասեր», Կ.Պոլիս, 1851, հունվար, թիվ 1, էջ 45:
[5] «Ազգասեր Արարատյան», 1848, 26 սեպտեմբերի, թիվ 12, էջ 15:
[6] Տե՛ս Джексон Т. А., указ. соч., с. 222-223; История Ирландии, стр. 206; Революции 1848-1849, том II, с. 311:
[7] «Եվրոպա», 1848, 26 սեպտեմբերի, թիվ 39, էջ 165; 3 հոկտեմբերի, թիվ 40, էջ 170:
[8] «Հայաստան» 1848, 9 հոկտեմբերի:
[9] Տե՛ս Джексон Т. А., указ. соч., с. 223; Революции 1848-1849, том II, с. 311:

նկատմամբ, այնուհանդերձ միահամուռ նշում էին դատարանում նրա համարձակ ու անվեհեր պահվածքը: Նրանք մեջբերել են Ու. Օ'Բրայենի խոսքը, որում զղջումի նշույլ անգամ չկար իր ողջ գործունեության համար: Նա շեշտում էր, որ «ինքը հայրենիքի առաջ ունեցած իր պարտքը կատարել է ու հանգիստ խղճով պատրաստ է ընդունել դատավճիռը»: Երկու պարբերականն էլ չեն խորշում հայտնել, որ դատարանում Ու. Օ'Բրայենի խոսքը ժողովուրդը ծափահարություններով ընդունեց[1]: Ու. Օ'Բրայենի ելույթի այս հատվածը և «արժանավայել կերպը» դատարանում հետագայում ընդգծել է նաև «Բազմավեպը»: Հանդեսը նշել է, որ դատարանում ներում չխնդրեց նաև 23-ամյա գեղեցիկ երիտասարդ Թ. Միգերը՝ արժանապատվորեն հայտարարելով. «Մի կարծէք որ դողդոջուն շրթամբք կեանքս պիտի խնդրեմ. ես զայն արդէն նուիրեցի հայրենացս՝ իր ազատութեան համար»[2]:

Անգլիական իշխանությունները դաժանորեն ճնշեցին նաև 1848 թ. սեպտեմբերին բռնկված տարերային ապստամբությունները: Երկրում առաջացած սովը, ինչպես նաև գործազրկությունը և քաղաքական իրավունքների բացակայությունն էլ ավելի ուժեղացրին իռլանդացիների արտագաղթը, ինչն ընդգծել են հայ պարբերականները: «Ազգասեր Արարատյանի» դիտարկմամբ ապստամբության ճնշումից հետո Անգլիայում «կատարեալ խաղաղութիւն» է, իսպառ անհետացել է նոր ապստամբության վտանգը իռլանդական համադաշնության կամ չարտիստների կողմից: Թերթը մտավախություն էր հայտնում, որ Իռլանդիայում կրկին սննդամթերքի «մեծ սղութիւն» կառաջանար, մարդիկ հանապազօրյա հաց հայթայթելու խնդիր կունենային՝ զոհ գնալով «սնոտի փառաց»[3]:

Ըստ «Հայաստանի»՝ Իռլանդիայի խնդիրները մնացին չլուծված, և «կատարեալ չեն հանդարտած բնակչած սիրտը», իսկ «Արշալույս Արարատյանի» գնահատմամբ Իռլանդիայի վիճակն «անհանգստություն կպատճառե քաղաքագետ անձանց», քանի որ մեծ թափով շարունակվում էր արտագաղթը: «Եվրոպան» իռլանդացիների արտագաղթի պատճառն իրավացիորեն համարում էր նյութական միջոցների սղությունը, աղքատությունը, հիվանդությունները, սպանություններն ու հափշտակությունները, ինչպես նաև օրենքների չգործելը: Խոշոր հողատերերի կողմից հողի տարեկան վարձը 25 տոկոսով իջեցնելը «երևելի ազդեցութիւն» չի ունեցել: Իռլանդիայի հարավային գավառներում «շատ ողորմելի վիճակ է», ամենուրեք տիրում է «սով, պակասութիւն ու կարօտութիւն»[4]:

Արևմտահայ ազգային-պահպանողական հոսանքը ներկայացնող «Եվրոպան», «Արշալույս Արարատյանը» և «Հայաստանը», բնավ համակրանք չարտահայտելով ազատություն և ինքնուրույնություն ձեռք բերելու համար զինված պայքարի ելած իռլանդական շարժման նկատմամբ, գերադասել են պատմել անգլիական կառավարության հոգածության և մարդասիրական վերաբերմունքի մասին: «Հայաստանի» լրատվությամբ Անգլիայի թագուհին Իռլանդիայում սովյալներին «առատ գթութենե շարժված» 1000 լիրա օգնություն ուղարկեց: Ըստ «Արշալույս Արարատյանի»՝ Անգլիայի կառավարությունը «մարդասիրաբար հոգ կտանի այս դժգոհությանց պատճառները իմանալու և ըստ հնարավորության դադրեցնելու կամ նվազեցնելու զանոնք»[5]: Ղ. Պալտազարյանի համոզմամբ Իռլանդիայում «հանդարտութիւնն ու բարեկարգութիւնը պետք է հաստատուն մնան, որպեսզի Մեծ Բրիտանիայի կառավարութիւնը կարողանա հարկավոր նոր կարգադրութիւններ և օրենքներ տնօրինել այս խեղճ ժողովրդի կացութիւնը լավացնելու համար»[6]: «Արշալույս Արարատյանն» այն դիրքորոշմանն էր, որ իռլանդացիները չպետք է պայքարեին խորհրդարան ունենալու համար և երկրում պիտի կայուն խաղաղություն պահպանեին, որպեսզի անգլիական կառավարությունը բարեփոխումների ճանապարհով նրանց վիճակը բարելավեր: Ավելի ուշ՝ 1849 թ., «Արշալույս Արարատյանը» գրում էր, որ իռլանդական առանձին խորհրդարան ունենալու պահանջը հասարակության մեջ այլևս նախկին ուշադրությանը չէր արժանանում, քանի որ Ջոն Օ'Կոննելլը ժողովրդի վրա «նույն ազդեցությունը» չուներ, ինչպես իր հանգուցյալ հայրը: Սրանից թերթը եզրակացնում էր, թե վերոհիշյալ խնդիրը «Դանիել Օ'Կոննելին հետ մեռավ ու թաղվեցավ»[7]: «Արշալույս Արարատյանը» գերագնահատում էր Դենիել Օ'Կոննելլի դերը իռլանդական ազգային շարժման մեջ: Դուբլինի քաղաքագլխի

---

[1] «Եվրոպա», 1848, 24 հոկտեմբերի, թիվ 43, էջ 181; 7 նոյեմբերի, թիվ 45, էջ 187; «Արշալույս Արարատյան», 1848, 29 հոկտեմբերի, թիվ 323:

[2] «Բազմավեպ», 1882, հ. 40, պր. Ա-Դ, էջ 187:

[3] «Ազգասեր Արարատյան», 1848, 16 հոկտեմբերի, թիվ 4, էջ 32:

[4] «Եվրոպա», 1848, 19 դեկտեմբերի, թիվ 51, էջ 211; 1849, 6 նոյեմբերի, թիվ 45, էջ 190:

[5] «Արշալույս Արարատյան», 1849, 7 հունվարի, թիվ 328:

[6] «Արշալույս Արարատյան», 1849, 21 հունվարի, թիվ 329:

[7] «Արշալույս Արարատյան», 1849, 11 նոյեմբերի, թիվ 350:

ջանքերն իրականում ավելի շատ ուղղված էին Իռլանդիայում հանդարտություն պահպանելուն, քան թե իռլանդացիների մարտական ոգու բարձրացմանը: Նա Իռլանդիայում քաղաքական և սոցիալական հեղափոխությունը համարում էր անիմաստ և փորձում էր վիգերի կառավարության հետ համաձայնության գալ՝ Իռլանդիան սովամահությունից փրկելու համար: Ինչ վերաբերում է նրա տղա Ջոնին, ապա այդ «ապաշնորհ, չար և անպատիվ» մարդը հոր մահից հետո կեղծ լուրեր էր տարածում՝ իբր «Երիտասարդ Իռլանդիան» «կոտրեց ազատարարի սիրտը»: Ճշմարտությունը այն էր, որ հայր և որդի Օ'Կոննելլներն «իրենք կոտրեցին Իռլանդիայի հույսերը»[1]:

Դ. Պալտազարյանն իրավացի էր այնքանով, որ իռլանդական ազգային-ազատագրական պայքարի ղեկավարներ Ջոն Օ'Կոննելը և Ուիլյամ Օ' Բրայենն իրենց անվճռականությամբ և իշխանություններից խաղաղ ճանապարհով զիջումներ ձեռք բերելու կողմնորոշմամբ լուրջ հարված հասցրին ազգային շարժմանը:

Իռլանդական ապստամբական պայքարի ճնշումից հետո երկար ժամանակ քաղաքական կյանքը մարեց: Անգլիական իշխանությունների բռնությունների և հալածանքների տակ ազգային շարժումը գնաց դեպի անկում, ինչն իրենց աշխատություններում ընդգծել են հայ հասարակական մտքի և դեմոկրատական հոսանքի ականավոր ներկայացուցիչներ Մատթեոս Մամուրյանն (1830-1901) ու Միքայել Նալբանդյանը (1829-1866):

Անգլո-իռլանդական հակամարտության ակունքներին քաջատեղյակ Մ. Մամուրյանն այն կարծիքին էր, որ իռլանդական ազգային շարժման դրդապատճառներից մեկը կրոնական խնդիրն էր: Այդ մասին նա գրում է. «Կաթոլիկ Իրլանտան բողոքական Անկլիոյ դէմ ահարկու պատերազմ մղեց: Իր պարագլուխն էր սքոնել հանդուգն հեղափոխականն, որ իր հայրենյաց ծանր վերքերը բոլոր աշխարհի առջև բանալով՝ ցույց տվավ՝ թե Իրլանտացին՝ տասնիններորդ դարուն մեջ՝ Եգիպտոսի գերիներեն, Սպարտայի իլոդներեն, Միջին դարու ստրուկներեն շատ ավելի ստորին, թշվառ սովալլուկ կենդանի մ» է, անհող, անտուն, թե ամեն քաղաքային ու զինվորական պաշտոնե զրկված է… թե Անկլիա կկեղեքե, կհարստահարե իր հայրենիքն, որի ազգային խորհրդարանը ջնջեր էր, և միայն իրեն կվերապահեր ամեն իրավունք, պաշտոն, մեծություն, վասնզի անկլիական եկեղեցին տերության եկեղեցին է, մինչդեռ կաթոլիկությունը կհալածվեր»[2]:

Արևմտահայ դեմոկրատական մտքի և XIX դարի երկրորդ կեսի հայ ազգային-ազատագրական շարժման գաղափարախոսության ստեղծման ասպարեզում նշանակալից դեր խաղացած Մ. Մամուրյանը զմայլվում էր Ջ. Մացցինիի ու Ջ.Գարիբալդու պայքարով, որոնք ոտքի էին ելել «անիրավ օրինաց դեմ, կղերին փառամոլության և տիրապետության դեմ, բռնապետական իշխանության դեմ, ազնվականաց լրբության դեմ, դրամագլխի անիրավության դեմ»[3]: Մ. Մամուրյանի համոզմամբ միայն եվրոպական ժողովուրդների համախմբումը և «ապստամբութիւն մը կարող էին այդ հրեշը սատակել»: Ի դեմս այդ հրեշի՝ Մ. Մամուրյանը դատապարտում էր անգլիական իշխանություններին՝ իռլանդական ազատագրական պայքարը ճնշելու համար: Նա գրել է, որ «Անկլիո կառավարությունն անկարեկից կը մնար» իռլանդական ժողովրդի ինքնավարություն ձեռք բերելու պահանջին ու «կը հարստահարեր» նրանց հայրենիքը: Անգլիական խորհրդարանի անդամ ընտրված Դ. Օ'Կոննելը, ըստ Մ. Մամուրյանի «գիշեր ցերեկ հրապարակին վրա, եկեղեցին կը պոռար ու կգոռար Անկլիո գերիշխանության դեմ» ու «Իրլանտայի աղետալի վիճակը հռչակեր էր…»[4]: Մ. Մամուրյանի գնահատմամբ «Օքոնելի ահարկու ձայնը բոլոր ազատականները շարժեց, բարլմենթն հուզեց, և թշվառ Իրլանտայի ի նպաստ բողոքները շատցան: Օքոնել, որ աննկուն ոգի, ազդու և մերթ անպատկառ լեզու մ' ուներ, դժվարությանց առջև ընկրկող մարդ չէր, իրեն նեցուկ ուներ խուժանն, որ մեկ մարդու պես ոտք ելավ ու արդարություն և հաց պահանջեց»[5]: Անգլիական խորհրդարանը, սակայն, նրա պահանջին ականջալուր չեղավ ու զենքի ուժով ճնշեց իռլանդական ազգային շարժումը: Ինքնատիպ մտածելակերպով օժտված Մ. Մամուրյանը գաղափարակից շատ զինակիցներից ու համախոհներից տարբերվում էր նրանով, որ «բարձրանում էր հատվածային սահմանափակությունից»[6]: Նա հավասարապես մտահոգվում էր թե՛ արևելահայերի, թե՛ արևմտահայերի և թե՛ եվրոպական ճնշվող ժողովուրդների ազատագրման համար և բարձր

[1] Джексон Т. А., указ. соч., стр. 109, 214-215.
[2] Ազատասիրական գաղափարները հայ հրապարակախոսության մեջ (1820-1920 թթ.), Ե., 1982, էջ 195:
[3] Նույն տեղում, էջ 193:
[4] Ազատասիրական գաղափարները հայ հրապարակախոսության մեջ (1820-1920 թթ.), էջ 196:
[5] Նույն տեղում, էջ 195:
[6] Ղազարյան Հ., Մատթեոս Մամուրյան, Ե., 1961, էջ 117:

էր գնահատում նրանց պայքարի առաջամարտիկներին ու ղեկավարներին: Այս մտայնությամբ Մ. Մամուրյանը գերագնահատում էր Օ'Կոննելլի գործունեությունը, որն իրականում ավելի շատ ժամանակ ու եռանդ էր ծախսում Իռլանդիայում կարգուկանոն պահպանելու, քան թե ժողովրդի պայքարի ոգին բարձրացնելու վրա: Նա աշխատում էր քաղաքական ճկուն մանևրներով հասնել 1800 թ. դաշինքի վերացմանը՝ ժամանակ առ ժամանակ փորձելով այդ հարցում ստանալ անգլիական այս կամ այն քաղաքական կուսակցության աջակցությունը [1]:

Հայ հասարակական մտքի համար անգնահատելի է Մ. Նալբանդյանի՝ որպես հպատակ ժողովուրդների ազատագրական պայքարի և ազգային հարցի տեսաբանի ծառայությունը: Նա, իր բազմաթիվ աշխատություններում հետևողականորեն մերկացնելով Անգլիայի, Ավստրիայի, Թուրքիայի գաղութային քաղաքականությունը, հիմնավորում և պաշտպանում էր բոլոր ժողովուրդների անկախությունն ու ազատությունն ամեն տեսակ ճնշումից ու շահագործումից:

«Նկատողությունք» հոդվածում Մ. Նալբանդյանը հռչակում է ազգերի իրավահավասարության սկզբունքը՝ շեշտելով. «Ոչ մի ազգություն իրավունք չունի կուլ տալու և ոչնչացնելու մի ուրիշ ազգություն, թող ամենայն ազգ պահպանե յուր ազգության կերպարանքը: Մարդկային սրտի համար մի ավելի տխուր բան չկա, քան թե տեսանել, որ մի ազգություն ընկնում էր և կործանվում էր ծանր հանգամանքների հարստահարության տակ - մի այլ ազգության ճնշողութենից...»[2]: Այս հայեցակետից ելնելով՝ Մ. Նալբանդյանը դատապարտում էր Անգլիայի վարած քաղաքականությունն Իռլանդիայում: Նրա համոզմամբ միայն «պարզամիտ մարդիկ կարող են հավատալ», թե ազատագրական պայքարի ելած եվրոպական ժողովուրդները «արժանի են անգլիական համակրության»[3]: Նա վստահ էր, որ Անգլիան առհասարակ ընդունակ չէ համակրանք դրսևորելու որևէ ժողովրդի նկատմամբ, ունի իր մշտական քաղաքական շահերը և «մի սիրտ չունի ականատեսի համակրությունը շարժելու»: Այդ մասին Մ. Նալբանդյանը գրում է. «Անգլիայի մեջ միայն գնայուն մեքենաներ կան, և թերևս ուրիշ ամենայն բան գտանվի այնտեղ, մարդկային սիրտ... շատ հազիվ: Վկա ենք կանչում լորդ Բայրընի ստվերը»[4]: Անգլիայում մարդկային սրտի բացակայությունը Մ. Նալբանդյանին հիմք էր տալիս խստորեն դատապարտելու անգլիական իշխանությունների բռնությունները ազատատենչ իռլանդացիների նկատմամբ: Նա նշավակում էր Անգլիային այն բանի համար, որ «Իռլանդո անկախության աշխատողքը իբրև պետության ընդդեմ ապստամբք կարող են դատապարտվել դեպի թիարան»[5]:

Անգլիական իշխանությունը, իսկապես, զանգվածային բռնություններ իրականացրեց իռլանդական ազատագրական պայքարի ղեկավարների և մասնակիցների նկատմամբ: Հազարավոր իռլանդացիներ հարկադրված եղան արտագաղթել Կանադա և Ամերիկա: Իռլանդիայի բնակչությունը 1841-1851 թթ. կրճատվեց գրեթե մեկ երրորդով: Ազգային-ազատագրական շարժման մեջ անդորր հաստատվեց մինչև 1858 թվականը, երբ «Ռեփիլ ընկերության» և «Իռլանդական համադաշնության» մի քանի ակումբներ միավորվեցին «Ֆեննի» գաղտնի ընկերությունում, որը սկիզբ դրեց ազգային նոր շարժման:

ԱՄՓՈՓՈՒՄ

Հայ պարբերական մամուլը և հասարակական հոսանքների երևելի դեմքերը 1848 թ. եվրոպական հեղափոխությունների և ազգային ազատագրական պայքարի փոթորկահույզ իրադարձությունների օրերին իրենց հրապարակումներում կարևորեցին նաև իռլանդական ազգային շարժումը: Ազգային պահպանողական հոսանքի ձայնափող պարբերականները, հիմնականում անկողմնակալ դիրքերից լուսաբանելով իռլանդացիների շարժումը, ճիշտ են ընկալել, որ նրանց պայքարը կրում էր անջատողական բնույթ: Իռլանդացիները ցանկանում էին չեղարկել 1800 թ. անգլո-իռլանդական «Ունիայի ակտը», վերականգնել իռլանդական խորհրդարանը, ձեռք բերել քաղաքական ինքնավարություն: Մ. Նալբանդյանի և Մ. Մամուրյանի համոզմամբ անգլիական տիրապետության տակ գտնվող իռլանդացիներն անկախության և ազատության իրավունք ունեին:

---

[1] Джексон Т. А., указ. соч., с. 199; Революции 1848-1849, том II, с. 301.
[2] Մ. Նալբանդյան, ԵԼԺ, հ. 2, Ե., 1947, էջ 259:
[3] Մ. Նալբանդյան, ԵԼԺ, հ. 4, Ե., 1949, էջ 98:
[4] Նույն տեղում, էջ 86:
[5] Նույն տեղում, էջ 89:

Феликс Мовсисян, АРМЯНСКАЯ ОБЩЕСТВЕННАЯ МЫСЛЬ ОБ ИРЛАНДСКОМ НАЦИОНАЛЬНОМ ДВИЖЕНИИ 1840-Х ГОДОВ. Ирландское национальное движение 1840-х годов нашло широкое отражение в армянской периодической печати того времени. Из публикаций европейской прессы и полученной информации армянские издания были хорошо осведомлены о политических, социальных и религиозных событиях, происходящих в Ирландии. По их сведениям, основными причинами ирландского национального движения стали: беспрецедентный голод 1847 г., упразднение англо-ирландского «Акта об Унии» 1800 г., стремление сформировать независимый парламент и эмансипация католиков-ирландцев. К ирландскому движению обращались прежде всего армянские периодические издания национально-консервативного течения.

Так, «рассудительные и дальновидные» редакторы и журналисты еженедельной газеты венских Мхитаристов «Европа» с беспристрастных и объективных позиций «в европейском стиле и мастерством» освещали борьбу ирландцев. По их мнению, в условиях голода, эпидемии и нищеты общество «Рипил», организация «Молодая Ирландия» пытались мирным путем упразднить Унию, но, потерпев неудачу, подняли восстание. По мнению журнала венецианских мхитаристов «Базмавеп», ирландцы стремились полностью избавиться от английского ига и провозгласить независимость страны.

Согласно политической и филологической еженедельной тифлисско-армянской газеты «Кавказ», ирландцы, объединившись с Англией, утратили свою свободу и с этого дня оказались в бедственном положении и в крайней нужде. Официальный орган константинопольского армянского патриархата «Айастан» («Армения»), называя ирландское движение мятежом, приходит к выводу, что «вольнолюбивое общество» «Молодая Ирландия», воодушевленное победой французской февральской революции, приложило все усилия для освобождения вооруженным путем.

Периодическое издание измирских армян «Аршалуйс араратян» («Заря араратская») осознавало стремление ирландцев к национальной независимости и понимало, что общество «Рипил» пыталось конституционными методами достичь политической независимости Ирландии.

Периодические издания индийских армян «Азгасер» («Патриот») и «Азгасер араратян» («Патриот араратский») в своих кратких публикациях критиковали колониальную политику Англии и насилие по отношению к ирландскому населению. Они считали, что ирландцы желали освободиться от английского ига и, утвердив независимую республику, самим управлять своей страной. «Азгасер араратян» («Патриот араратский») высмеивает робость ирландских повстанцев, в результате чего «гора родила мышь».

Ирландское национальное движение в своих публикациях восхваляли видные деятели армянского демократического течения: Микаэл Налбандян и Матеос Мамурян. М. Налбандян порицал политику Англии в Ирландии, свободолюбивый народ которой достоин симпатии. Он клеймил позором английские власти, которые осуждали стремящихся к свободе мятежных ирландцев. Согласно М. Мамуряну, Англия упразднила ирландский парламент и все права предоставила католикам. Он с болью отмечал бедственную ситуацию в Ирландии, которую постоянно угнетают и грабят английские власти. Единственным выходом ирландцев из данного положения он считал восстание.

Ключевые слова: *Ирландия, свобода, движение, Рипил, «Молодая Ирландия», «Объединенные ирландцы», армянская печать, общественная мысль.*

Feliks Movsisyan, ARMENIAN PUBLIC OPINION ON THE IRISH NATIONAL MOVEMENT OF THE 1840s. The Irish National Movement of the 1840s received a wide reflection in the Armenian periodicals of the time. According to reports in the European press, they were well aware of the political, social and religious events taking place in Ireland. They considered the main reasons for the Irish national movement to 1847 unprecedented famine of 1847, the repeal of the Anglo-Irish "Act of Union" in 1800, the existence of an independent parliament, the emancipation of the Catholic Irish. The Irish national movement was mostly covered by the Armenian national-conservative current periodicals. Among them, the "thoughtful, far-sighted" editors and journalists of the Mkhitaryans' weekly "Europe" in Vienna with "European-style and skills" from an impartial position covered the Irish struggle. According to them, in the conditions of famine, epidemic and misery, the Irish company "Ripil" and the organization "Young Ireland"

tried to abolish the union peacefully, but failed and rebelled. According to the Mkgitaryans' "Multi-Novel" magazine in Venice, the Irish wanted to completely break the English yoke and become a sovereign country.

According to the Tbilissian Armenian political-philological weekly "Tbilissi", the Irish lost their freedom by uniting with England, and had been suffering a lot since that day. The official newspaper of the Armenian Patriarchate of Constantinople, calling the Irish movement a riot, comes to conclusion that the "Young Ireland" "freedom-loving company", inspired by the victory of the February Revolution in France, is making every effort to achieve freedom by armed means.

The Smyrna-Armenian "Arshaluys Araratyan", realizing the aspirations of the Irish for national independence, understands that the "Ripil" company tries to achieve the political freedom of Ireland in a constitutional way. The paper advocated for the Irish to achieve this in a peaceful and thoughtful way, without violence and riots.

The Indian-Armenian "Azgaser" and "Azgaser Araratyan" periodicals in their brief publications criticized the British colonial policy and the violence against the Irish. They believe that the Irish want to get rid of the British yoke by establishing an independent republic to rule their country. "Patriotic Araratyan" mocks the cowardice of the Irish rebels, because of which "the mountain gave birth to a mouse".

The National Movement of the Irish in its public discourse praised the great figures of the Armenian democratic current Michael Nalbandyan and Matteos Mamuryan. M. Nalbandyan condemns Britain's policy in Ireland, whose freedom-loving people deserve sympathy. He blames the British authorities for strongly condemning the Irish rebels seeking independence. M.Mamuryan believes that England abolished the Irish parliament and reserved all rights to Catholics. He mourns the catastrophic situation in Ireland, which is constantly being oppressed by the British. He considers rebellion to be the only way out of this situation for the Irish.

Key words: *Ireland, freedom, movement, Ripil, "Young Ireland", "United Irish", Armenian press, public opinion.*

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ИСТОРИЯ И КУЛЬТУРА

АРМЕНОВЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ

HISTORY AND CULTURE

JOURNAL OF ARMENIAN STUDIES

2021, № 2

Գլխավոր խմբագիր՝ Էդիկ Մինասյան

Խմբագիր՝ Միքայել Մալխասյան

Տեխնիկական խմբագիր՝ Տիգրան Ղանալանյան
Սրբագրումը՝ Մերի Հովհաննիսյանի
Համակարգչային ձևավորումը՝ Միքայել Մալխասյանի

Հասցեն՝ 0025, Երևան, Աբովյան 52
Адрес-0025, Ереван, ул. Абовяна 52
Address: 0025, Yerevan, Abovyan 52
E-mail: histcultjournal@gmail.com
tel: 060-71-06-00, 055-92-88-00

ԵՊՀ հրատարակչություն, Երևան, Ալ. Մանուկյան 1
«Մեկնարկ» ՍՊԸ տպարան, Երևան, Աբովյան 41

Издательство ЕГУ, Ереван, ул. Ал. Манукян 1
Типография ООО “Мекнарк”, Ереван, ул. Абовяна 41

Տպաքանակը՝ 300